

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ
12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014Թ. №22 (330)

Եվ ո՞ւր
հասկացար, որ
խաղերեղ քեզ
Գցելու են մի
ամենի կրկես...

ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑ



Թթի օղու փառապոնս Գորիսում

Վ Այունիքյան ավանդույթներ

Այս միջոցառման մասին նախապես այնքան շատ էր խոսվել լրատվամիջոցներով, որ շատերն էին անհամբերությամբ սպասում դրան: Խոսքից էին մի քանի րոպե ցուցադրել օղու թորում ռեալ ժամանակի մեջ եւ դրա համար փառապոնսը: Օղու թորումը գորիսեցիներին համար սովորական կլիներ, բայց քաղաքի հյուրերի համար այն իր մեջ բազմաթիվ էկզոտիկ պահեր կապարուկներ: Ափսոսանքով ենք նշում, որ կազմակերպիչներին ժամանակի սղության պարճառով դա չէր հաջողվել, բայց «անմահական» խմիչքի համարտումը փառավորապես հաջողվել էր:

Մի փոքրիկ թերության մասին էլ նույնքան փոքրիկ ակնարկ՝ եւ վերջ:

Անընդհատ խոսում էին մեծաթիվ հյուրերի, հատկապես արտասահմանցի հյուրերի գալստյան մասին: Քաղաքապետարանի աշխատակիցներն այնպես էին հավաստիացրել այդ առթիվ, որ մտածում էինք, թե «ասեղ Գցելու» տեղ չի լինելու: Դե մարդ ես, մտածում ես՝ հանկարծ ոտնատակ չընկնե՞ս: Պարզվեց, որ մնան մտավախությունն անտեղի էր: Միջոցառման մասնակիցները, այսինքն՝ Որանք, ովքեր իրենց ապրանքը, աշխատանքն էին առաջարկում, ավելի քիչ չէին, քան հյուրերը, իսկ արտասահմանցի հյուրեր համարյա չկային: Երբեմն-երբեմն տեղացի մեկ-երկու երիտասարդի ընկերակցությամբ երեւում էին իրենց, իրոք, էկզոտիկ հագուստ-կապուստով, սանրվածքով առանձնացրով կամավորները:

Իսկ այժմ՝ հաճելի մասին: Զգացվում էր, որ միջոցառմանն առանձնակի հաճույքով ու պատասխանատվությամբ էին նախապատրաստվել հյուրերը Մեղրուց, Կապանից, Մխիթարից: Մեղրեցիներն իրենց մեղրահամ խոսքով առաջարկում էին նույնքան մեղրահամ պտուղներ, դրանց մուրաբաներն ու չրերը: Հաճելի անակնկալ էր նման բովանդակությամբ սեղանի առկայությունը կապանցիների մոտ: Ավելին, կապանցիներն առաջարկում էին իրենց պահածոյի գործարանում եփված մուրաբաները, ջեմերը: Այսինքն՝ հույս կա, որ անտառի հասած տանձն այսուհետ արջի փայ չի դառնա:

Միսիանից Վահագն Համբարձումյանը ներկայացրել էր իր ղեկավարած ղեկորատիվ խեցեգործության կենտրոնի աշխատանքները, որոնք միանշանակ դրական ընդունվեցին թե՛ գորիսեցիների եւ թե՛ հյուրերի կողմից:

Ինչպես միշտ, այս անգամ էլ առատ սեղաններ էին բացել գյուղական համայնքներից շատերը՝ Ակնեղը, Հարթաշենը, Հալիծորը, Խնձորեսկը, Ներքին Խնձորեսկը, Քարահունջը...

Միջոցառմանն իրենց բազմաթիվ աշխատանքներն էին ցուցադրել Գորիսի կանանց ռեսուրս կենտրոնը, Գորիսի Գ.Պարոնյանի անվան գեղարվեստի դպրոցի սաները, ամհատ ձեռներեցներ Սիրան Սիրունյանը, Ալբերտ Միրզոյանը: Իսկ հիմա՝ գլխավորի՝ փառատոնի՝ թթի օղուն նվիրված բաժնի մասին:

Այստեղ արդեն տոն տվողները հիմնականում Գորիսի տարածաշրջանի ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՑ 3

Ձախողում եւ փախուստ

Միանյա գործունեության ընթացքում նա կարողացավ կասկածի տակ դնել մարզպետական ինստիտուտի լրջությունը ոչ միայն Սյունիքում, այլև ամբողջ Հայաստանում

Վ Ռեվիեն

Սյունիքի մարզպետի աթոռը մեկ տարի առաջ՝ 2013թ. հուլիսի 10-ին, Վահե Հակոբյանին նվիրելը Հայաստանի երրորդ հանրապետության կադրային քաղաքականության ամենացուցանակներից մեկն էր, եթե ոչ ամենամեծը: Այդ նշանակումը մեծագույն ծաղր էր Սյունիքի եւ սյունեցու հանդեպ: Բայց, փառք Աստծո, երկրի ղեկավարությունն ուժ գտավ իր

մեջ եւ շտկեց սխալը: Մեկ տարվա ընթացքում Վահե Հակոբյանն այդպես էլ չդարձավ Սյունիքի ու սյունեցիների մարզպետը, այլ մնաց իբրև գործիք կամ խաղալիք մի քանի անբարո գոյության ապակամակած ձեռքերում: Այդպես էլ չմոտեցավ իր պարտականություններին, գրեթե ոչ մի օր ժամանակին աշխատանքի չհաճախեց, օրերով մարզպետարան չայցելեց: Այդպես էլ չհասկացավ, թե որ մարզի մարզպետն է, չխորացավ տարածաշր-

ջանի խնդիրների ու սյունեցիների մտահոգությունների մեջ, չփորձեց ձեռք գարկել սյունիքյան գոնե մեկ խնդրի լուծմանը: Օտարված մնաց մարզի համայնքներից, հիմնարկ-ձեռնարկություններից, հասարակությունից: Մեծ հարված հասցրեց քաղաքացիական՝ առանց այդ էլ ճաք տված համերաշխությանը, ինչպես եւ մարզի կրթական ու առողջապահական համակարգերին, լիովին տապալեց հանրակրթական դպրոցների կառավարումը:

Պաշտոնավարման առաջին իսկ օրերից Սյունիքի մարզպետի լիազորությունները՝ պետականորեն սահմանված, մաս-մաս շաբաշ տվեց պալատական ներքինիներին ու նաժիշտներին՝ թվով չորս-հինգ հոգու, ովքեր բանարկությանը, անբարո գործելակերպով հայոց մեթոդաբանությանը համարվում էին ունեցող անձինք էին: Տարածքային կառավարման մեջ առաջին անգամ ներդրեց «ստուկաչի» ինստիտուտը: Եվ պալատական ներքինիներն ու նաժիշտները ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՑ 2

ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. «Թող առողջ լինեն բոլորը...»

Հարցազրույց Գորիսի սրտաբանական կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ Կարեն Համբարձումյանի հետ

Վ Առողջադաստիություն

«Սյունյաց երկիր» թերթը մեկ անգամ արդեն անդրադարձել է Գորիսում տեղակայված «Ֆրանս-հայկական» սրտաբանական կենտրոնին, որն իր գործարկման մեկուկես տարվա ընթացքում, ինչ-ինչ պարճառներով, երկու-երեք ամիս չէր աշխատում:

Արդեն մեկ տարի է, ինչ սրտաբանական կենտրոնը նորից գործում է:

Ավելորդ չէ մեկ անգամ եւս փոքրիկ անցումով հիշել կենտրոնի բացման պատմությունը: 2010թ. հոկտեմբերի 16-ին Գորիսում նշվեց «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» կառուցման աշխատանքների ավարտը: Բուժաստատության կառուցման նախաձեռնությամբ հանդես էր եկել Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը, Մարսելի «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միությունը» եւ Ֆրանսիայի Բոշ դյու-Ռոն նահանգի վարչա-ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՑ 4



Ձախողում եւ փախուստ

Միանյա գործունեության ընթացքում նա կարողացավ կասկածի տակ դնել մարզպետական ինստիտուտի լրջությունը ոչ միայն Սյունիքում, այլև ամբողջ Հայաստանում

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

ընդ հիմնեցին աներեւակայելի քայլերի՝ իր լիազորություններից ինքնա-մեկուսացված մարզպետին մինչև վերջ ծաղրելու, նրա դերը զրոյացնելու համար: Հենց նրանք էին, որ ողջ գիշերը մարզպետի հետ անցկացնելուց հետո հաջորդ օրն իսկ տարածում էին զավեշտապատումներ Վահե Հակոբյանի մասին, հայտարարում՝ «Մենք մարզպետ չունենք», «Մարզպետը ես եմ» եւ այլն:

Սյունիքի մարզպետի ու մարզպետարանի վարկաբեկումն այդքան հաջողությամբ գուցե եւ տեղի չունենար, եթե մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանը, մարզպետի տեղակալներ Վաչագան Գրիգորյանն ու Աշոտ Մարոյանը չզնային ինքնա-վաստացման ու ինքնաչնչացման ճանապարհով, չդառնային կույր գործիք մարզպետարանը ներսից զավթած ներքինիների ձեռքում:

Մեկ տարվա ընթացքում, քի-նախնդրությամբ հարազատ հորը գերազանցած զավակը, փորձեց մարզպետական ինստիտուտի գործունեությունը վերջ տալու նրանցից, ովքեր երբեւէ ու ինչ-որ հարցում անհամաձայնություն էին հայտնել Մաքսիմ Հակոբյանի հետ: Եվ նրանց վճատելու համար քանիցս խցկվեց ան գան երկրի ու ԼՂՀ-ի ամենաբարձր ղեկավարների աշխատասենյակներ՝ գրպարտելու իր կերպարը մերժող սյունեցիներին: Երեւի Հայաստանի միակ մարզպետն էր, որ իր պաշտոնն ու անվաստակ փողերը ծառայեցնում էր իր ղեկավարած մարզի մարդկանց վարկաբեկման անբարո գործին:

Մարզպետի աթոռին բազմելուց հետո նրա առաջին գործը եղավ «Սյունյաց երկիր» թերթի բաժանորդագրությունն ու ընթերցումն իր ենթակաների շրջանում արգելելը: «Սյունյաց երկիր» իբր հակակշիռ ստեղծելու համար նախաձեռնեց նոր պարբերականի հիմնադրում՝ այդպես էլ չհասկանալով, որ այդ թերթը (եթե, իհարկե, ծնվեր) տեղ չէր ունենա «Սյունյաց երկիր» դավաճած արժեքավոր գրքում, ասել է թե՛ մենք մրցակիցներ չէինք կարող լինել, ավելիք՝ մենք կողոնկերից այդ լրատվամիջոցի ծնունդը: Միաժամանակ՝ պարբերաբար ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս մայրաքաղաքային մի քանի լրատվամիջոցի՝ իրեն չքննադատելու, Սյունիքի հիմնախնդիրները հանրությունից եւ կառավարությունից թաքցնելու համար:

Բանախյուսական անզուգական երեւոյթ էին Վահե Հակոբյանի ելույթներն ու ուղերձները: Սկզբից դրանք բանավոր էին, որոնցից մի քանիսը հրապարակեցինք «Ինձ բաց թողեք, ես գնամ» խորագրով, որոնցից որեւէ բան հասկանալի անհնար էր: Հետո նրա համար ելույթներ էին գրում, որոնք, սակայն, հայերենի հետ ավելի քիչ աղերսներ ունեին, քան մարզպետի բանավոր ելույթները:

2014 թվականին Վահե Հակոբյանի ձախողումները նոր ոլորտներ ընդգրկեցին: Շատ ցանկացավ ընդգրկվել ՀՀ-ի տեղական խորհրդի կազմում, բայց չկարողացավ: Շատ

ցանկացավ Գործում քաղաքապետ դարձնել իր բիզնես ընկերոջը, բայց անոթալի իրավիճակում հայտնվեց: Դեռ 2013թ. հուլիսին կանցավ նույն այդ ընկերոջը փոխմարզպետ դարձնել (պրոֆիլակտորիումի գիշերային հավաքներից մեկում նույնիսկ շնորհավորեցին «ապագա» փոխմարզպետին), բայց տապալվեց: Եվ նման բազում օրինակներ...

Վահե Հակոբյան մարզպետին հանդուրժելն ի սկզբանե խնդիր է եղել Սյունիքում: Բուժաստատությունների եւ հանրակրթական դպրոցների ղեկավարները, բնակա-նաբար, չէին կարող նրան նվիրա-ծության տեսիլքներ չբեմադրել: Վա-խենում էին ստուգումներից, քառը կորցնելուց, ֆինանսական բնույթի ղեկավարություններից: Այլ էր հա-մայքների ղեկավարների պահված-քը: մինչև վերջ էլ ակնկալում էին Քաջարանի կոմբինատի ֆինանսա-կան աջակցությունը՝ Վահեի գոյու-թյունը հանդուրժելու դիմաց: Մի քիչ այլ էր Սիսիանի քաղաքապետի վարքը: փողից բացի՝ նա ակնկալում էր նաեւ զորակցություն՝ դատական լաբիրինթոսից դուրս գալու համար, բայց ավա՜ր... Մարզպետի ժպիտին արժանանալու համար Աղասի Հա-կոբյանյանը նույնիսկ տարօրինակ (եթե ոչ ողորմելի) քայլեր կատարեց: Մեկ օրինակ. բանտարկեց «Սյունյաց երկիր» թերթի՝ Համո Սահյանին նվիրված բացառիկ համարի՝ քաղա-քապետարանին հասանելիք քառա-սուն օրինակը: Միայն բանաստեղծի որդու անագանգից հետո թերթի հա-մարը կախնեցից ազատվեց: Ի դեպ, դա «Սյունյաց երկիր» տպագրանա-կի մի մասը բանտարկելու երկրորդ դեպքն էր: Առաջին անգամ Մաքսիմ Հակոբյանն էր դիմել այդ քայլին՝ բանտարկելով Քաջարան քաղաքին նվիրված համարի տպագրանակի մի մասը (Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանն էլ քաղաքապե-տարանի հասանելիքն էր թաքցրել եւ միայն հիմա՝ վեց տարի անց, հանում է թաքստոցից):

Ինչեւէ, հուլիսի 1-ից հետո, երբ Մաքսիմ Հակոբյանը հեռացվեց «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխա-վոր տնօրենի պաշտոնից, մեր հա-մայքների ղեկավարները սկսեցին ակնհայտորեն հեռանալ Վահե Հա-կոբյանից: Վերջինիս սկսեցին ընկա-լել իբրեւ բեղից ընկած բրինձ:

Ստեղծված նոր իրավիճակում նրան մնում էր մեկ ելք՝ օր առաջ փախչել Սյունիքից՝ դրա համար չխնայելով ոչինչ: Եվ 2014թ. սեպ-տեմբերի 4-ին նրա փախուստը հա-ջողվեց...

Իսկ 2013թ. հուլիսի 10-ից մին-չե 2014թ. սեպտեմբերի 4-ը Սյու-նիքի համար դարձավ կորուսյալ ժամանակաշրջան. այդպես էլ կար-ծանագրվի մեր երկրամասի բազմա-դարյան պատմության մեջ:

Վահե Հակոբյանին, այդուհան-դերձ, հաջողություն ենք ցանկանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտե-տության պետական կոմիտեի նա-խագահի պաշտոնում: Թող նա չձախողվի այնպես, ինչպես ձախող-վեց Ազգային ժողովում ու Սյունիքի մարզպետարանում:

ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Նաիրա խաթունն ու հանրակրթությունը



Ն երբ գալիս է սեղեսնբեր

Սյունիքի մարզպետարանի կրթու-թյան, մշակույթի եւ սպորտի վարչությունում վերջին մեկ տա-րում հաստատված գործելաճող շարունակում է մրահողել մարզի հանրակրթությանը եւ հարկապես այդ վարչության ողջամիտ աշխա-տակիցներին ու հանրակրթու-թյան ներկայացուցիչներին: Դա ամենէին էլ պարահական չէ. կրթության վարչությունը մարզ-պետարանի բացառիկ օղակներից է, որի գործելակերպի հանդեպ հեղաքրքրությունն օրինաչափ է, բացառիկ է... անհրաժեշտը: Դա այն օղակն է, որի գործունեու-թյունն ուղղակիորեն առնչվում է անող սերնդի կրթության ու դաստիարակության սրբատուր գործին, մեր ժողովրդի վաղվա օրվան:

Ամիսներ առաջ էինք գրել, որ կրթության վարչության պետը շատ քիչ ժամանակ է նվիրում այն գոր-ծին, որի համար ինքը պետությունից բարձր աշխատավարձ է ստանում: Ասել էինք նաեւ (եւ դա հաստատում են նրա հետ ամեն օր ու ամբիջապես չվիճող գործընկերները), որ անբա-վարար է տիրապետում իր պար-տականություններին (ավելի ճիշտ՝ տիրապետում է սիրողական մա-կարողակով), քաջալերում է դպրոցի տնօրեններից մի քանիսի ապօրինի գործողությունները, ովքեր վարչու-թյան պետի հետ մերձավորի կարգա-վիճակ ունեն:

Նրան գրեթե ամեն օր ժամերով կարելի է տեսնել պարապոլյունից տառապող ու չիվար փոխմարզ-պետ Աշոտ Մարոյանի աշխատասե-նյակում: Եվ դժվար թե նրանց սոյ-բաթները կապ ունենան կրթության համակարգի գործերի հետ, քանզի փոխմարզպետը կրթական գործի իմացությունից հեռու է հարյուրավոր մղոններով:

Կրթության վարչության պետին գրեթե ամեն օր կարելի է տեսնել նաեւ ներպալատական խժոճու-թյունների առաջին գծում, որի նպա-տակը մարզպետի լիազորություն-ներից (տեսական ժամանակ նրա փաստացի չգոյության պայման-ներում) պատահիկներ փախցնելն ու ազդեցության սեփական ուրբը գորացնելն է: Եվ այդ ոլորտում, կարելի է ասել, «հաջողություն-ներ» արձանագրեց. նախ՝ կարո-ղացավ մարզպետարանից դուրս վճռել իր գլխավոր մրցակիցնե-

րից մեկին, ապա կարողացավ եր հնարավորինս նվազեցնել մարզ-պետարանի թիվ մեկ բանասրկուի դերակատարությունը ներպալատա-կան խաղերում:

Դպրոցի տնօրենների վերջին երկու խորհրդակցությունում՝ նվիր-ված դպրոցի աշխատակազմում իրականացվող կրճատումներին (եւ Գործում, եւ Կապանում), խոսում էր արհամարհական տոնով, մունճաթ անելով, հոխորտանքով, հաթաթա-ներով, ինչի արդյունքում վերջնա-կանապես սպառվեցին նրան լուրջ ընդունելու ռեսուրսները: Իմիջիայ-լոց, այդ խորհրդակցություններում հայտարարեց, որ հանրակրթական դպրոցներում այս ուսումնական տարում հարյուր աշխատատեղ է կրճատվում, չլինել Վահե Հակոբյա-նը, չորս հարյուր հոգի կկրճատվեն (ա՜յ) քեզ պետական քաղաքականու-թյունը:

Հետեւողականորեն ուղղորդում էր դպրոցի տնօրեններին՝ թերթերից որը կարելի է ընթերցել, որը՝ ոչ: Ամիսներ առաջ էլ վիուկարոս էր սկսել Կապանի դպրոցներում՝ բա-ցահայտելու այն տնօրեններին եւ ուսուցիչներին, ովքեր դեմ էին կե-նսաթոշակային համակարգում «պար-տադիր կուտակային» բաղադրիչի ներդրմանը:

Կրթական համակարգի աշխա-տողների օգոստոսյան ավանդական ժողովում (26 օգոստոսի 2014թ.) ներկայացավ մի ելույթով, որի մեջ դպրոցական կյանքին առնչվող գոնե մեկ լուրջ խնդիր կամ մտահոգու-թյուն չմատնանշեց: Ոլորտի փոր-ձառու մասնագետները մեզ համո-զում են, որ ինքը չէր կարող անկեղծ խոսք ասել, քանզի՝ ա) Սյունիքի հանրակրթության թիվ մեկ պրոբլե-մը ինքն է՝ Նաիրա Ավանեսյանը, բ) ինքը խորությամբ չի տիրապետում գործին, գ) ոլորտի խնդիրների մի զգալի մասն առաջացել է իր եւ իր յուրային տնօրենների ոչ պրոֆեսիո-նալ ու կամայական գործունեության հետեւանքով:

Օգոստոսի 29-ին տարածվեց մի փաստաթուղթ՝ «Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի ուղերձը» գիտե-լիքի օրվա առթիվ: Նույնանման փաստաթուղթ տարածվում էր նա-խորդ տարիներին եւս: Եվ նպատակ էր ունենում մատնանշել հանրակր-թության առաջնությունները, գնահատել իրավիճակը: Այդ փաստաթուղթը սովորաբար պատ-րաստում էր կրթության վարչության պետը (կամ պատրաստվում էր նրա մասնակցությամբ ու գիտությամբ) եւ ներկայացվում մարզպետին: Այս

տարվա ուղերձը (անպայման ընթեր-ցեք) ցնդաբանության եւ անգրագի-տության մի անօրինակ հուշարձան է: Մեզ համոզում են, որ կրթության վարչության պետը դրա հետ որեւէ առնչություն չունի. եթե այդպես է, ապա շատ վատ է. մի՞թե կրթու-թյան ոլորտի առաջին դեմքին չի հե-տաքրքրել, թե ինչ գնահատական է տրվում իր ոլորտին, որ խնդիրներն են առաջնային հայտարարվում:

Կրթության վարչությունն անցած մեկ տարում քանիցս հայտնվեց աղմկահարույց պատմությունների մեջ, ինչը, անշուշտ, ավելի ցեխտեց մարզպետարանի լրջագույն այդ օղակի դիմապատկերը: Այդ պատ-մություններից վերջինի մասին՝ ստու-րել:

Կրթության վարչության կրթու-թյան բաժնի մասնագետ Նելլի Կա-րապետյանը, ով ռուսաց լեզվի երկարամյա, փորձառու ուսուցչուհի է եւ դրական համբավ ունի մարզի ու հատկապես Կապանի մանկավար-ժական հանրության մեջ, հուլիսի 7-ին մեկնում է Երեւան՝ ՀՀ քաղծա-ռայության խորհրդի հայտարարած մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը համընտելու նպա-տակով: Մրցույթը մարզպետարանի կրթության բաժնի պետի թափուր տեղի համար էր հայտարարված (թե ինչու է բաժնի նախկին պետ Արսեն Գրիգորյանը պաշտոնակալ արվել ու այլ աշխատանքի փոխադրվել՝ չեն ասում): Նելլի Կարապետյանը մեկ-նում է Երեւան՝ աշխատակազմի ղե-կավարին ու վարչության պետին տե-ղակ չապահելու՝ հիմքեր ունենալով, որ նրանց համար ինքն անցանկալի թեկնածու է, որ նրանք այլ թեկնածու ունեն կրթության բաժնի պետի հա-մար:

Մեկ օր անց մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազ-միկ Ղազարյանը նախաձեռնում է Նելլի Կարապետյանին աշխատան-քից հեռացնելու գործընթաց: Միայն մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի համար դիմադրության շնորհիվ է, որ Ռազմիկ Ղազարյանի պլանը ձախողվում է: Կառնեմ Կոզ-մանովը կարողանում է հիմնավորել, որ Նելլի Կարապետյանին աշխա-տանքից ազատելու որեւէ հիմք չկա՝ հիշեցնելով «Քաղծառայության մա-սին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները:

Բայց ամենաուշագրավը, ըստ Նելլի Կարապետյանի, իր եւ Ռազմիկ Ղազարյանի հանդիպումն է լինում, որը սկսվում է աշխատակազմի ղե-կավարի մունճաթով. «**Մարզպետն ասել է, որ դուք ազատված եք աշխատանքից: Նախկինում էլ եր կու անգամ քեզ հեռացնում էին, բայց ես փրկեցի**»: Եվ դրան հաջոր-դում է Ռազմիկ Ղազարյանի վիրա-վորական արտահայտությունների շարքը: «**Ռազմիկ Ղազարյանը, ով տարիներ առաջ, երբ դատավաճում էի իր զավակներին, քանիցս գլխի-կոր ու սիրթեցած լսում էր իմ հան-դիմանանքը, ներողություն հայցում էր բացառապես վիրավորական արտահայտություններով**», – պատ-մում է Նելլի Կարապետյանը:

Նելլի Կարապետյանը, ով առանց այդ էլ առողջական խնդիրներ ուներ, Ռազմիկ Ղազարյանի «քաղաքա-կիրք» գրույցից հետո հայտնվում է ավելի վատ առողջական վիճակում, անաշխատունակության թերթիկ վերցնում է մնում տանը՝ բուժվելու: Այս հանգրվանում բեմադրա-թյակ է բարձրանում բացառապես նման իրավիճակների համար լույս աշխարհ եկած մի հին ու նոր պե-րսոնա՝ Աշոտ Շատրյանը՝ մարզ-պետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վար-չության պետը (ի դեպ, Աշոտ Շա-տրյանին խոստացել էինք հիշեցնել առասպելական Միդասի ականջների ՇՆՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 5

Այունիքյան ավանդույթներ

Թթի օղու փառապոռն Գորիսում

ՍԿԻՉԲԸ ԷՋ 1

գյուղական համայնքներն էին, այն համայնքները, որոնք ավանդաբար թթի օղի են ծխել: Նրանք առատ սեղաններ են բացել՝ լի իրենց ստեղծած բերք ու բարիքով: Հյուրերը հաճույքով էին վայելում անմահական հեղուկը, իսկ վրայից համտեսում զուտ գորիսյան ճաշատեսակներ՝ ճախաթթու, սիբեխ, դաուրմա, իսկ դրանց վրայից էլ վայելում սառը թան: Ակնեցիներն էլ առաջարկում էին գոմշի մածուց՝ դանակով կտրիչ ու կեր:

Հրապարակի տաղավարներից մեկում կազմակերպվել էր մրգաչրերի վաճառք, որը շատ արագորեն սպառվեց:

Թթի օղի թորելու ավանդույթը մեր տարածաշրջանում, ինչպես նաև Արցախում գոյություն ունի շատ վաղուց: Այն մեր կենցաղի անբաժանելի մասն է եղել և կա: Իսկ հանրապետության այլ շրջաններում նրա ճանաչման գործում մեծազույն դերակատարում ունի մեր մեծ հայրենակից Սերո Խանգաղյանը: Թթի օղու «Քարահունջ» անվանումն առաջինը նա է շրջանառության մեջ դրել:

Կար ժամանակ, որ այսպես կոչված «Քարահունջ» օղին մեր տարածաշրջանի այցեքարտն էր, եւ նրա օգնությամբ շատ խրթին հարցեր էին հեշտությամբ լուծվում, ինչպես ասում են, շատ փակ դռներ էին բացվում: Բայց նոր առեւտրային հարաբերությունները շուկան հեղեղեցին տանյակ, հարյուրավոր հնարավոր անուններ կրող, հաճախ խիստ կասկածելի ծագում ու բաղադրություն ունեցող սպիրտային խմիչքներով, հատկապես օղիով: Էլ չենք խոսում վիսկու, կալվադոսի, ամաբետոյի եւ բազմաթիվ օտարալեզու ու օտարահունչ անվամբ խմիչքների մասին: Իսկ դրանց գնե՞րը...

Հիշում ենք մի անկեղտոտ, երբ դարաբաղցին Ռուսաստանից վերադարձած իր ծանոթին հարցնում է, թե նա իր ճամփորդության ընթացքում պեպսի խմած կա: Ծանոթը պատասխանում է, թե ինքը չի խմել, բայց իր հորեղբոր տղան տեսել է, թե ինչպես են խմում: Հիմա, ես անձամբ չեմ տեսել, բայց տեսնողներ են եղել, որ մեկ շիշ վիսկին արժե 400 հազար եւ ավելի դրամ: Մեղա, մեղա: Իսկ բոլոր այդ խմիչքները (բացառությամբ կոնյակի եւ շամպայի) ստանում են շաքարեղեգից, լավագույն դեպքում՝ խնձորից, սպորից, մի խոսքով՝ մրգից: Այսինքն՝ եթե համեմատենք մեր թթի օղու հետ, ապա մեր օղին որակի տեսակետից շահեկանորեն տարբերվում է նույնիսկ տանյակ հազարավոր դրամներ արժեցող այդ խմիչքներից:

Եկել է ժամանակը վերականգնելու թթի օղու վաղեմի փառքը: Հայտնի բան է, որ թե՛ Արցախում եւ թե՛ Այունիքում թթի օղին ավելի հաճախ օգտագործել և օգտագործում են ոչ թե որպես ոգելից խմիչք, այլ որպես դեղամիջոց: Ծննդով արցախցի լրագրող-հրապարակախոս Վահիկ Սանթրյանն անցած դարի 80-ական թվականներին ռուսական «Огонек» հայտնի ամսագրում ընդարձակ հոդված էր հրապարակել «Ինչո՞ւ են դարաբաղցիները երկարակյաց» վերնագրով, որտեղ նա

կոնկրետ հասցեներով նշում էր, որ բոլոր երկարակյացները, անկախ սեռից, մշտապես օգտագործել են թթի օղի՝ մի թասը լավ է, երկուսը բավ է սկզբունքով: Այսօր էլ ավանդական բժշկության մեջ այն օգտագործվում է որպես բուժամիջոց:

Իսկ ինչո՞ւ է Գորիսի թթի օղին եւ պես տարբերվում այլ տարածաշրջաններում պատրաստված օղուց:

Հիմա կասե՛ք՝ թուրք թուրք է, Գորիսում լինի, թե Հնդստանում: Նույնը չէ՞: Չէ, նույնը չէ: Ահա թե ինչու: Արարատյան դաշտավայրում, Այունիքի հովտային տարածքներում մայիսի վերջերին թուրք սկսում է հասունանալ: Գորիսում դա տեղի է ունենում հունիսի սկզբներին: Հու-

ԼՍԻՍԱԿԱՐԸ Կ. ԳՐԻՍԱՆԻՍՏԱՆ



Օգոստոսի 23-ը նաև հարսանջահանդեսի օր էր: Զույգերից մեկը (Վարդան Կարապետյան՝ Կոռնիձորից, Քրիստինե Բարխուդարյան՝ Տեղից) այցելեց Գորիսի զբոսայգի, որտեղ կազմակերպվել էր փառապոռնը



ԼՍԻՍԱԿԱՐԸ Կ. ԳՐԻՍԱՆԻՍՏԱՆ



ԼՍԻՍԱԿԱՐԸ Կ. ԳՐԻՍԱՆԻՍՏԱՆ



ԼՍԻՍԱԿԱՐԸ Կ. ԳՐԻՍԱՆԻՍՏԱՆ

քաղցրահամ հատիկներ, որոնք ծառի ճյուղից նույնիսկ մատներով դժվար է պոկել, իսկ պոկվելուց հետո էլ իր քաղցրության պատճառով ձեր մատներից էլ դժվար է պոկվում: Այդ ժամանակ Գորիսի ենթաշրջանի գյուղերում թուրք թափ են տալիս բեյբաբի մակահի նման հաստ փայտեղի միջոցով՝ դրանցով հնարավորինս ուժեղ խփելով թթնուձյուղերին: Ասեմ ավելին՝ սեպտեմբերի կեսերին եկեք Գորիս, եւ ես ձեզ սեւ թոփով, որի օղին առանձին թեմա է, կիյուրասիրեն: Այո, սեւ թուրք «աչքի է ընկնում» մայիսի վերջերին եւ վերջանում սեպտեմբերին: Ահա թե ինչու է Գորիսի թթի օղին էպպես տարբերվում հանրապետության այլ վայրերի նույն հունքից թորած օղուց:

Ժամանակ առ ժամանակ խոսակցություններ են լսվում Գորիս քաղաքը տուրիզմի կենտրոն դարձնելու մասին՝ նկատի ունենալով նրա ինքնատիպ ճարտարապետությունը, հասկանալի է՝ պատմամշակութային մյուս արժեքները եւս, որոնց մեջ, անշուշտ, մտնում է նաև զուտ գորիսյան խոհանոցը (տաքացրած թան, չորաթանի թանապուր, ճախաթթու եւ, իհարկե, թթի օղին): Բայց մեզա-

Նորասկսված շնորհավորեց եւ երջանկություն մաղթեց Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը

նում ամեն լավ բան ոչ թե կամաց-կամաց, այլ շատ արագ վերանում է: Այդ վտանգը կախված է նաև թթի օղու վրա:

Օգոստոսի 23-ի փառատուն ավարտվեց ուշ երեկոյան՝ երիտասարդական դիսկոտեկով եւ տոնական հրավառությամբ:

Նոր քաղաքապետի ընտրությունից հետո սա ամենամասայական համաքաղաքային միջոցառումն էր: Առանձին փոքր թերություններ չհաշված, որոնք ամիսուսափելի են մնան դեպքերում, փառատունը պետք է հաջողված համարել: Կազմակերպիչները հայտարարեցին, որ այս միջոցառումը դառնալու է ավանդական եւ կազմակերպվելու է յուրաքանչյուր տարվա հուլիսի սկզբներին:

ՌԵԴԿ Կ ԿԱՅՐԱՊԵՏՅԱՆ



Հիվանդանոցի հեղափոխման լաբորատորիաներից մեկը

ԿԱՐԵՆ ԶԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ. «Թող առողջ լինեն բոլորը...»

Հարցազրույց Գորիսի սրտաբանական կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ Կարեն Զամբարձունյանի հետ

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

Կազմը: Ծրագրի նվիրատուներից է նաև Լիբանանի վարչապետ Սաադ Չարի-րին:

Ձգալի գումար է հատկացրել ֆրանսահայ բարերար Գրիգոր Շահինյանը՝ կտակի համաձայն:

Ծրագրի արժեքը կազմել է ավելի քան 432 միլիոն ՀՀ դրամ:

Արդեն 1,5 տարի է, ինչ սրտաբանական կենտրոնն իր ողջ հնարավորություններով աշխատում է: Սպասարկել է շուրջ 2000 հիվանդի, կատարել 300 եւ ավելի զոնդավորում ու 200 եւ ավելի ստենդավորում, բուժել սիրտ-անոթային տարբեր հիվանդություններ:

Բուժամենակազմը համալրված է տեղի վերապատրաստված, շնորհալի բուժքույրերով:

Ցավոք, վերջին շրջանում մինչ այդ Նորք-Մարաշ սրտաբանական կենտրոնից պարբերաբար ժամանող լավագույն բժիշկ-բուժքույրերի այցը կտրականապես դադարել է, որը, ինչ խոսք, բացասաբար է անդրադառնում կենտրոնի լիարժեք սպասարկման աշխատանքներին:

2013թ. հունվարի 22-ին տեղի ունեցավ «Համահայկական հիմնադրամի» միջոցներով կառուցված «Ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի» բացումը, որին մասնակցեցին նաև Ֆրանսիայի բարերարները:

Երկհարկանի բուժաստանությունում նախատեսված են էխոկարդիոգրաֆիայի, էլեկտրական ակտիվության, ռենտգեն, սթրես-տեստավորման, զոնդավորման, ստենդավորման, վերակենդանացման կաբինետներ, արյան լաբորատորիա, շտապ օգնության սենյակ, ինչպես նաև ութ հիվանդասենյակ՝ երկուական մահճակալով:

Ֆրանսիական կողմը կենտրոնին տրամադրել է նաև շտապ օգնության չորս մեքենա: Բացարձակ խնդիր չկա ամբուլատոր հիվանդներին զննելու

համար՝ նորագույն սարքավորումների միջոցով:

Հիվանդանոցն ունի կենտրոնական ջեռուցում եւ առանձին ջրամատակարարում, կահավորված է արդիական բուժտեխնիկայով եւ սարքավորումներով:

Կենտրոնի գործադիր տնօրենը Մելքոն Գարսեֆեյանն է:

Այս անգամ անդրադառնում ենք կենտրոնը համալրած մեկ շնորհալի, երիտասարդ բժշկի՝ բուժմասի ղեկավար, միջամտական /իստեթիկ/ հոմոլոգ/ բժիշկ Կարեն Զամբարձունյանին:

Ծնվել է 1983 թվականին Արմավիրում: Ավարտելով Երեւանի Մխիթար Գեղարքունիքի բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետը՝ հետագայում մասնագիտացել է միջամտական սրտաբանության գծով եւ 1999-2005թթ. անցել կլինիկական օրդինատուրա՝ «Սրտաբանություն» մասնագիտությամբ:

2009-2012թթ. աշխատել է «Ձեյթունի սիրտ-անոթային բժշկական կենտրոնում»՝ ինտերվենցիոնալ բաժանմունքի ղեկավար:

Սրտաբան Կարեն Զամբարձունյանն ութ ամիս ծառայելով Արցախում, արդեն ինը ամիս է, ինչ աշխատում է Գորիսի սրտաբանական կենտրոնում, միաժամանակ իր զինվորական ծառայությունը կատարելով 60369 զորամասում: Այդ ամիսների ընթացքում երիտասարդ բժիշկն արդեն հասցրել է կատարել սրտի տասնյակ զոնդավորումներ եւ ստենդավորումներ՝ սպասարկելով հարյուրավոր հիվանդների:

Մի քանի հարց ուղղելով բժիշկ Կարեն Զամբարձունյանին՝ միաժամանակ հիվանդների երախտագիտությունն ու շնորհակալությունն ենք փոխանցում շնորհալի սրտաբանին:

– **Բժիշկ, Ձեր կարծիքով ինչո՞ւ որոշվեց սրտաբանական կենտրոնը բացել Գորիս քաղաքում, եւ այ**



Գորիսի սրտաբանական հիվանդանոցը

սոր այն ինչպիսի՞ առաքելություն է իրականացնում տարածաշրջանում:

– «Հայաստան-Ֆրանսիա առողջապահության միության» մասնագետների կողմից խոր եւ ճիշտ ուսումնասիրության շնորհիվ նպատակահարմարը Գորիս քաղաքը համարվեց՝ իր աշխարհագրական դիրքով, մարզի մյուս քաղաքներին եւ Արցախին մոտ լինելու կարեւոր հանգամանքով:

Թեւ Գորիսի քաղաքային հիվանդանոցում գործում է սրտաբանական բաժանմունք՝ միայն թերապևտիկ օգնությամբ, նշված պատճառների համաձայն, անհրաժեշտ էր քաղաքում ունենալ առանձին մասնագիտացված հաստատություն, որտեղ կիրականացվեր սրտի ամբողջական բուժումը:

Ըստ սոցիոլոգիական ուսումնասիրության տարածաշրջանում տարեկան 40-50 հոգի սրտի խնդիրներ է ունենում: Մասնագետների բացա-

հայտմամբ՝ սրտի հիվանդությունների եւ հատկապես կաթվածի վտանգի դեպքում զոնդավորում պետք է կատարել առաջին վեց ժամվա ընթացքում: Ուշացումը հիվանդի համար կարող է ճակատագրական լինել:

Մինչդեռ, բոլորիս հայտնի է թե մարզի կտրվածությունը մայրաքաղաքից, եւ թե՛ ծննան ամիսներին ճանապարհների հաճախակի անացանելիությունը, էլ չեն խոսում սուր ինֆարկտով հիվանդի տեղափոխման անհնարինությունը մասին:

Նոր պայմաններում հիվանդանոցում հնարավոր է կատարել վեց զոնդավորում եւ սպասարկել 16 ստացիոնար ու 20 ամբուլատոր հիվանդի:

Այսօր կենտրոնում աշխատում են Նորք-Մարաշ բժշկական կենտրոնում վերապատրաստված եւ համապատասխան աշխատանքային փորձառություն ունեցող մասնագետ բուժքույրեր:

Ցավով պետք է նշեն, որ կենտրոնը կարիք ունի մեկ մասնագետ բժիշկների, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի մասնագետների պարբերական գործուղումների՝ մինչեւ Գորիսի սրտաբանական կենտրոնի համալրվելը՝ վերապատրաստված եւ համապատասխան մասնագիտացված իր տեղական կադրերով:

Կենտրոնը հոկտեմբերին արդեն սպասում է օրդինատուրան ավարտած առաջին տեղական կարգին: Սա արդեն ողջունելի է: Կարծում են՝ մոտ ապագայում Սյունիքի փայլուն մասնագետներն իրենց հաջողությունները կգրանցեն նաև քա-

հետ, ինչպիսին սիրտն է, որի բուժման մեկ անցան շեղումը բավական է, որ ճակատագրական եւ անվերադարձ լինի հիվանդի համար:

Մեր վիճակագրությամբ եւ ճշգրիտ ուսումնասիրությամբ՝ սրտի միջամտական բուժումները հիվանդի կյանքը երկարացնում են ութ տարով: Սա ծայրահեղ, սուր ինֆարկտների դեպքում, իսկ ընդհանրապես հիվանդը կարող է միանգամայն երկար տարիներ նորմալ կենսակերպ վարել՝ հետեւելով առողջ ապրելակերպի ցուցումներին:

– **Բժիշկ, ի՞նչ հիվանդությունների հակվածությունն է գերիշխում մեր տարածաշրջանում, որոնք կարող են բերել սիրտ-անոթային ախտահարումների:** Արդյո՞ք ամբողջական սպասարկում է իրականացվում կենտրոնի կողմից՝ տարածաշրջանի, Արցախի հիվանդների նկատմամբ: Մեր սրտաբանական կենտրոնը համեմատելով մայրաքաղաքի առաջատար սրտաբանական հիվանդանոցների հետ, իր արդիական սարքավորմամբ ինչպիսի՞ սանդղակի վրա է գտնվում:

– Գորիսի սրտաբանական կենտրոնը, իմ աշխատած ամիսների կտրվածքով, ասեն, որ իրոք լիարժեք սպասարկում է մարզի եւ Արցախի հիվանդներին: Հիվանդները գալիս են Մեղրուց, Քաջարանից, Կապանից եւ Սիսիանից, Արցախի ամենահեռավոր վայրերից:

Որոշ դեպքերում քաղաքային հիվանդանոց դիմած հիվանդները մեզ մոտ են տեղափոխվում հիվանդանոցի շտապ օգնության մեքենայով:

Իսկ ընդհանրապես, մեր կենտրոնն ունի շտապ օգնության ծառայություն, իր մեքենաները:

Մեզ մոտ հիվանդն անմիջապես ենթարկվում է համապատասխան բուժզննման, եւ ոչ մի ակնթարթ չկորցնելով, ճիշտ ժամանակին կատարում ենք միջամտական բուժումներ:

Տարածաշրջանում, համեմատաբար, մի քիչ ավելի տարածվածություն ունեն սիրտ-անոթային հիվանդությունները, որոնց պատճառը կարող է լինել լեռնային սուր զոտին, ոչ կիրք վերաբերմունքը՝ սեփական առողջության նկատմամբ, անառողջ ապրելակերպը, ինչո՞ւ ոչ՝ նաև Արցախյան պատերազմի ժամանակ սահմանափակ լինելու հանգամանքը: Գործոցները շատ են, եւ յուրաքանչյուրը պետք է առաջին իսկ առողջական ահազանգի դեպքում դի մի համապատասխան մասնագետի եւ կանխարգելի նրա հետագա խորացումն ու բարդացումը:

Այնպիսի հիվանդություններ եւ գործոցներ, ինչպիսին են շաքարային դիաբետը, արյան բարձր ճնշումը, օրգանիզմում խլելստերինի ավելցուկն ու յոդի չափաբաժնի պակասը, համապատասխան բուժում չանցնելու դեպքում, անկասկած հանգեցնում են սիրտ-անոթային հիվանդությունների:

Առանց չափազանցելու պետք է ասել, որ Գորիսի սրտաբանական կենտրոնն իր արդիական սարքավորումների հագեցվածությամբ ոչ միայն չի գիջում մայրաքաղաքի ամենաառաջատար մասնագիտացված կենտրոններին, այլև՝ շատ դեպքերում նույնիսկ գերազանցում է նրանց:

Ինչպե՞ս կարելի է չողջունել այն փաստը, որ մեր կենտրոնում արդեն տեղադրվել է 2-րդ անգիրտափակ բացառիկ սարքավորումը, որն իրականացնում է ուղի, ծեռքի, պերիֆերիկ անոթների ստենդավորումներ:

Կենտրոնն ունի նաև էխոկարդիոգրաֆիա, որն ամենագագայուն սարքերից է եւ վաղաժամ հայտնաբերում է սրտի իշեմիկ հիվանդությունները, հնարավորություն ընձեռնում վաղ եւ լիարժեք բուժման:

– **Բժիշկ, մեկ շատ նուրբ**

հարց. եթե հիվանդն այդ պահին գուժար չունի, բայց հանկարծակի սիրտ-անոթային խնդիրներ են ծագել, օգնություն իրականացվում է կենտրոնում: Եվ ընդհանրապես, օրվա կտրվածքով բանի՞ հիվանդ եք սպասարկում ու հիմնականում՝ ի՞նչ ուղղությամբ: Պատահողում են դեպքեր, երբ հիվանդներ են գալիս նաեւ այլ մարզերից կամ մայրաքաղաքից: Հիվանդը կարող է երաշխիք ունենալ, որ իր սրտի ստենդավորումը կատարվում է բարձրորակ ստենդներով: Չէ՞ որ, գիտենք, այսօր հայաստանյան շուկան լցված է նաեւ կեղծ ստենդներով, որոնք կարող են ոչ թե բարելավել, այլ ավելի վատթարացնել հիվանդի վիճակը, հասցրել՝ ընդհուպ մահվան: Ինչպե՞ս է այս հարցին վերաբերում առողջապահության նախարարությունը:

– Սկսենք նրանից, որ մեր կենտրոնում, համաձայն ֆրանսիական կողմի հետ պայմանավորվածության եւ նրա օրենքների, հիվանդին նախ եւ առաջ պետք է ընդունել եւ հարկ եղած դեպքում միջամտական բուժում անցկացնել՝ նախապես չկարելու էրելով հիվանդի դրամ ունենալ-չունենալու հարցը: Դա շատ մարդասիրական վերաբերմունք է հիվանդի նկատմամբ, միաժամանակ բարձրագույն է կենտրոնի ու նրա բուժանձնակազմի վարկանիշը:

Ասեն, որ մենք զգուշացված ենք նաեւ ՀՀ առողջապահության նախարարի կողմից՝ յուրաքանչյուր սուր ինֆարկտի դեպքերում անվճար միջամտական, վիրահատական բուժումներ կատարելու մասին:

Սա եւս բնակչությանն է նպաստ քայլ է: Գեղըր նույն են, չեն փոխվել եւ, կարծում են, յուրաքանչյուր քաղաքացի ցանկության դեպքում կարող է տասնհինգ հազար դրամ ունենալ ամբուլատոր հետազոտության համար:

Չունդավորման եւ ստենդավորման դեղորայքը կենտրոնը տրամադրում է անվճար:

Ցավոք, առաջին զեղչեր, պետպատվոցներ չունենք: Կարծում են՝ վաղ թե ուշ այս հարցերը կսնունեն առողջապահական համակարգի ծրագրերի մեջ:

Կենտրոնը օրվա ընթացքում միջին հաշվով սպասարկում է 15-20 հիվանդի՝ կատարելով խորհրդատվություն, ամբուլատոր բուժզննումներ եւ մեկ-երկու հոգու զոնդավորում ու ստենդավորում:

Գորիսի սրտաբանական կենտրոնի բարձրորակ աշխատանքի, բուժանձնակազմի պատրաստվածության մասին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ այստեղ գալիս են ոչ միայն Սյունիքի մարզից եւ Արցախից: Հիվանդները կենտրոնին են դիմում ինչպես հանրապետության այլ մարզերից, այնպես էլ՝ Երեւանից: Դա խոսում է այն մասին, որ մարդիկ վստահում են Գորիսի սրտաբանական կենտրոնի բուժանձնակազմին, նրա օգտագործած միջամտական սարքավորումների բարձրորակությամբ:

Այո, ցավոք, լինում են դեպքեր, որ հենց մայրաքաղաքի սրտաբանական կենտրոններում կամ հիվանդանոցներում մասնագետները հիվանդներին ստենդավորում են կեղծ ստենդներով, օրինակ՝ չինական, որոնց համար անտեղյակ եւ խաբված հիվանդը վճարում է անորակ ստենդի իսկական գնից անհամեմատ բարձր: Նման փաստերը ոչ միայն խղճի դեմ են, բժիշկների տված Հիպոկրատի երդումից շատ հեռու, այլեւ՝ ավելի են վատթարացնում հիվանդի իսկական գնից անհամեմատ բարձր: Նման փաստերը ոչ միայն խղճի դեմ են, բժիշկների տված Հիպոկրատի երդումից շատ հեռու, այլեւ՝ ավելի են վատթարացնում հիվանդի իսկական գնից անհամեմատ բարձր:

Գորիսի սրտաբանական կենտրոնը նման աշխատանք չունի, օգտագործում ենք բարձրորակ՝

ամերիկյան, ճապոնական, գերմանական եւ այլ պետությունների արտադրած իսկական, բարձրորակ եւ ոչ կեղծ ստենդներ:

Ահա թե ինչու են մեր կենտրոն միջամտական բուժման գալիս նաեւ Երեւանից:

Առողջապահության նախարարությունն այսօր լուրջ քայլեր է ձեռնարկում այդ արտադրող, կասեի՝ հանցավոր երեւոյթը կանխելու, վերացնելու ուղղությամբ:

Կարծում են՝ ճիշտ եւ հետեւողական տարվող պայքարն անպայման արդյունք կտա:

– **Բժիշկ, խոսակցություններ կան Արցախում սրտաբանական կենտրոնի բացման մասին: Որքանո՞վ են դրանք իրական եւ նպատակահարմար: Ինչպիսի՞ն են տարածաշրջանի հիվանդանոցների հարաբերությունները մեր սրտաբանական կենտրոնի հետ: Կարողանո՞ւ են սրտային խնդիրներով իրենց դիմած հիվանդներին ժամանակին եւ ճիշտ ուղղորդում տալ՝ դեպի կենտրոն, թե՞ բավարարվում են թերապեւտիկ բուժումներով՝ հիվանդի առողջությանը հաճախ անվերադարձ եւ մեծ վնաս հասցնելով: Մահացության ինչպիսի՞ տոկոս է գրանցվել կենտրոնում իր գործարկման մեկ եւ կես տարում: Եղե՞լ են հիվանդներ, որոնք շտապ ուղարկվել են մայրաքաղաքի սրտաբանական կենտրոն՝ վիրահատության: Ծրագիր կկա՞ առաջիկայում սրտի վիրահատություն կատարել նաեւ Գորիսի սրտաբանական կենտրոնում: Ո՞րն է կենտրոնի ամենամեծ ձգտումը:**

– Արցախում սրտաբանական կենտրոն բացելու մասին խոսակցություններ իրոք եղել են եւ գուցե՞ հիմա էլ կան:

Անձամբ ես, որպես սրտաբան եւ բժիշկ, դրա նպատակահարմարությունը չեմ տեսնում: Սյունիքի տարածաշրջանում մեկ սրտաբանական կենտրոնը լիովին բավական է: Արցախի ամենահեռավոր վայրերից անգամ հիվանդը հանգիստ կարող է հասնել Գորիս՝ ամենէն չուշանալով նախատեսված վեց ժամից, ավելին, այդ ժամանակամիջոցում նա արդեն կարող է համապատասխան բուժում ստանալ եւ վերադառնալ տուն:

Եթե որեւէ բժշկական կենտրոնի բացման հնարավորություն կա Սյունիքի կամ Արցախի որեւէ քաղաքում, կարծում են, այն պետք է այլ ուղղություն ունենա, ասենք, ուռուցքաբանական կամ ներքոփրաբուժական: Եվ նպատակահարմար կլինի, եւ բազմազան, եւ ի նպաստ հիվանդների ու կենտրոնների ներդաշնակ գործունեության:

Ինչ վերաբերում է տարածաշրջանի հիվանդանոցների բարելավման, կանցեղոյային հարաբերություններին մեր կենտրոնի հետ, միանգամից ասեմ՝ կարծես այդ հարաբերություններն այդքան էլ բարելավման կան չեն, որից միայն իրենց դիմած հիվանդն է տուժում:

Հաճախ սրտի դեղորայքային բուժումները միայն վատթարացնում են ինֆարկտի նախանշաններ ունեցող հիվանդի վիճակը, էլ չասեն, որ դեղորայքային բուժումներ են կատարվում նաեւ ինֆարկտ տարած հիվանդի հետ: Արանք ես համարում եմ հիվանդի կյանքի համար վտանգավոր եւ սիրողական բուժումներ:

Գորիսի հիվանդանոցի դեպքում պատկերը մի քիչ այլ է. բժիշկներն ուզեն թե ոչ, հիվանդին ուղղորդում են կենտրոն, որովհետեւ եւ հիվանդներն են տեղեկացված, եւ բնակավայրն է նույնը:

Կուզեի տարածաշրջանի հիվանդանոցների հարաբերությունները կենտրոնի հետ ավելի անմիջական, փոխզփոխային եւ ջերմ լինեին:

Մեզ մոտ մահացության տոկոսի մասին ասեն, որ ամենաիղեակական աշխատանքի դեպքում էլ, դրանից,

ցավոք, խուսափել չես կարող: Վերջին մեկ տարում մեզ մոտ գրանցվել է մեկ մահացություն հենց իմ ստենդավորման ժամանակ: Հիվանդը յոթանասունն անց տարիքում էր, բայց դա էլ կարելու չէ. հիվանդին, դժբախտաբար, բերել էին մեծ ուշացումով եւ արդեն լիովին ախտահարված սրտով ու անոթներով: Շատ ցավալի են ինձ համար նման դեպքերը: Կցանկանալի ընդհանրապես այդպիսի դեպքեր չլինեին, եւ սրտի խնդիր ունեցող մարդը ժամանակին ներկայանար կենտրոն ու համապատասխան բուժում ստանար:

Քիչ, բայց եղել են դեպքեր, երբ այլեւս նպատակահարմար չենք գտել հիվանդի միջամտական բուժումները եւ նրան ուղարկել ենք Երեւանի սրտաբանական կենտրոն՝ վիրահատության:

Կարծում են, առաջիկա տարիներին կենտրոնը կընդլայնի իր տարածքն ու գործունեությունը՝ իրականացնելով նաեւ սրտի վիրահատություն: Այստեղ կնշակվեն անոթային վիրաբուժության հետ կապված բուժման նոր եղանակներ:

Հրատապ է նաեւ տեղական կադրերի պատրաստման, նեղ մասնագետներով կենտրոնը մշտական համալրելու խնդիրը:

Իսկ մեր ամենամեծ ձգտումը դրակյալ եւ արդյունավետ սպասարկման շնորհիվ ճանաչում եւ հեղինակություն ձեռք բերելն է ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ նրա սահմաններից դուրս:

– **Բժիշկ, ո՞րն է կենտրոնի ամենամեծ խնդիրը, գուցե՞ խնդիրները: Չե՞ր խոսքը՝ ուղղված մեր բնակչությանը:**

– Այնպիսի անհրաժեշտ եւ բարձրակարգ բուժաստատություն, ինչպիսին Գորիսի սրտաբանական կենտրոնն է՝ իր արդիական հագեցվածությամբ, պետք է սրբորեն պահպանել եւ ավելի կատարելագործել, բարելավել եւ մարզային իշխանությունների կողմից այն պետք է արժանանա նրբաբակատ եւ հոգատար վերաբերմունքի, սրտացավության՝ նրա հոգսերի ու խնդիրների նկատմամբ:

Ես կասեմ ընդամենը ճանապարհի մասին. կենտրոնի գործարկումից ի վեր ճանապարհը խիստ անբարեկարգ է, խորդուբորդերով, իսկ անբարեկաստ եղանակներին՝ ուղղակի անհեղինակ եւ չափազանց վտանգավոր՝ ծանր հիվանդ տեղափոխելու համար:

Ամեն ինչ չէ, որ Ֆրանսիայի բարերարների խնդիրն է, իշխանությունները պետք է մտածեն, որ դա նախ եւ առաջ իրենց քաղաքն է, իրենց քաղաքի ճանապարհը, մասնավոր, որ այն տանում է դեպի այդպիսի մի կարելու-րագույն հաստատություն:

Եզրակացությունը թողնում են ձեզ:

Տարածաշրջանի բնակչությանը կիրորդելի՝ աջակցություն հետեւեք ձեր առողջությանը, ժամանակ առ ժամանակ հետազոտվեք, առողջ ապրելակերպ վարեք, ձեզ գերծ պահեք բացասական սթրեսներից, ավելորդ հուզական ծանրաբեռնվածությունից:

Աստված մի արասցե, սիրտ-անոթային կամ դրան նպաստող որելե հիվանդության ազդանշանի դեպքում էլ անմիջապես դիմեք համապատասխան բժշկի, որպեսզի հետո շատ ուշ չլինի, չբարդանա հիվանդությունը, եւ բժիշկն էլ կարողանա օգտակար լինել հիվանդին՝ ժամանակին եւ արդյունավետ բուժելով նրան:

Թող հիշեն մեր քաղաքացիները՝ հիվանդության կանխումն ու ժամանակին բուժումը հազար անգամ ավելի հեշտ են, քան՝ երբ այն արդեն բարդացված է:

Թող առողջ լինեն բոլորը: – Շնորհակալություն:

Հարցազրույցը՝ ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱՆԱՅԱՆԻ

Նաիրա խաթունն ու հանրակրթությունը

Ներ գալիս է սեղաններ

ՍԿԻԶԲԸ ԷՅ 2

պատմությունը՝ կրկնված մեր օրերում: Դա այն ժամանակ էր, երբ նա սկսեց ակտիվ դերակատարություն ունենալ Սիսիանի հիվանդանոցը կազմաբանողելու գործընթացում: Մեր խոստումն ուժի մեջ է): Նա հանձնարարություն է ստանում Ռազմիկ Ղազարյանից՝ ճշտել, թե որքանով է հիմնավոր Նելլի Կարապետյանի անաշխատունակության թերթիկը: Այստեղ մտադրեցին, որ անաշխատունակության թերթիկ տալը բացառապես բժշկի (այս դեպքում՝ ընտանեկան բժիշկ Անահիտ Ջհանգիրյանի իրավունքն է), եզրակացնում է եւ զեկուցում՝ անաշխատունակության թերթիկը չիմծու է:

Նելլի Կարապետյանին հայտարարվում է խիստ նկատողություն:

Ստեղծված իրավիճակում Նելլի Կարապետյանն այլեւս նպատակահարմար չի գտնում մասնակցել կրթության բաժնի պետի թափուր տեղի համար օգոստոսի 23-ին տեղի ունեցած մրցույթին: Կրթության բաժնի պետ է ընտրվում Եղվարդի դպրոցի ուսնասվար Հայկ Հարությունյանը, ով, բարեբախտաբար, կրթության աշխատողների կողմից դրակյանորեն է բնութագրվում: Սակայն... Արդյո՞ք օրինական կարող է համարվել մի մրցույթ, որին մասնակցելու համար հայտագրվածները (ոչ միայն Նելլի Կարապետյանը) ինչ-ինչ պատճաններով հրաժարվեցին մասնակցել մրցույթին:

Այդ ամենից հետո Նելլի Կարապետյանը քիչ հավանական է համարում իր հետագա աշխատանքը Նաիրա Ավանեսյանի ղեկավարության ներքո, ով, թեեւ այդ պահին արձակուրդում էր, բայց մատուց մատերի չի քաղաքից մատուցում: Նա արձակուրդում էր, բայց մատուց մատերի չի քաղաքից մատուցում:

Եվ Նելլի Կարապետյանը հարց է բարձրացնում՝ բարոյական ի՞նչ իրավունքով է Ռազմիկ Ղազարյանը զբաղեցնում Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը:

Նա օրինաչափ է համարում, որ իրենից բացատրություն պետք է պահանջեին մեկ օր աշխատանքի չներկայանալու համար: Բայց բացատրություն պահանջելուց առաջ Ռազմիկ Ղազարյանը պետք է կանգներ հայելու առաջ, մի լավ նայեր իրեն ու հիշեր, թե քանի-քանի հոգի են ամեն օր անհարգելի պատճառով բացակայում կամ ուշանում աշխատանքից, թե քանի-քանի հոգի են օրերով քնում մարզպետարանի իրենց աշխատասենյակներում կամ համակարգչային խաղերով օր մթնեցնում: Առնասարակ, ինչպես կարծում է Նելլի Կարապետյանը, Ռազմիկ Ղազարյանի գործունեությունը՝ կապված կադրերի ընդունման, ազատման, ինչպես եւ գործուղումների ու ֆինանսների հետ, հանգամանակից ուսումնասիրման կարիք ունի:

Մեր հարցին՝ տեղյա՞կ էր այդ ամենին մարզպետը, չէ՞ք փորձել նրան տեղեկացնել, որ Չեզ հանդրավի հալածում են, նա պատասխանեց «Իմաստ ունե՞ր մտնել նրա մոտ, օ՛հ мистер Ноль, օ՛հ դատարկություն...»:

Սեպտեմբերի 1-ի առիթով մարզի կրթության աշխատողներից շատե-

րին մտահոգում էր մի քանի հարց եւս, որոնց պատասխանն ակնկալում ենք ստանալ Նաիրա Ավանեսյանից: Արդյո՞ք կրթության վարչություն պետք կապ ունի դպրոցներում իրականացվող տեսրերի ու գրքերի (շատ հաճախ ապօրինի) առևտրի հետ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ դեմ չի կանգնում դպրոցականներին ասպատակելու «օրինականացված» այդ արշավին:

Արդյո՞ք կրթության վարչության պետը կապ ունի դպրոցներում թևածող դրամահավաքության հետ: Ճիշտ է, միջնակարգ եւ հիմնական դպրոցները դրամահավաքությամբ զիջում են Գորիսի, Կապանի, Սիսիանի ավագ դպրոցներին, բայց եւ չեն հրաժարվում կողոպուտի այդ ձեւից:

Արդյո՞ք հավաստի են շրջանառվող խոսակցությունները, որ վերջին մեկ տարում մարզի երկու դպրոցում, մարզպետարանի գիտություն, միջնակարգ կրթության երկու ատեստատ է «անհետացել»:

Ի՞նչ գործով կամ առաքելությամբ է կրթության վարչության երիտասարդ աշխատակցուհին պարբերաբար հրավիրվում «Լեռնահայաստան» կոչվող հիմնադրամ:

Ի՞նչ է տեղի ունեցել Եղեգի միջնակարգ դպրոցում, որի համար քրեական գործ է հարուցվել: Ինչո՞ւ էր Սյունիքի օրվա մարզպետը դպրոցի տնօրենների հավաքում հանդիմանում իրավապահներին՝ Եղեգի դպրոցում բացահայտված ապօրինություններին իրավական ընթացք տալու համար: Ինչի՞ հետ համաձայն չէր մարզպետը:

Մարզի չ՞որ դպրոցներում է անցած ուսումնական տարում արծանագրվել բարձր դասարանցի աղջիկների հղիության երկու դեպք, արդյո՞ք այդ դպրոցների տնօրենները պատասխանատվության են ենթարկվել:

Ինչպե՞ս է Քաջարանին մերձ դպրոցներից մեկի տնօրեն Անուշի որդին հայտնվել կրթության վարչության աշխատակազմում, ի՞նչ հաստիք էր զբաղեցնում, ինչո՞ւ հանկարծակի ազատվեց աշխատանքից:

Ի՞նչ հանգամանքների արդյունքում է աշխատանքից ազատվել Կապանի N10 դպրոցի տնօրեն Արթուր Հակոբյանը:

Երկար ժամանակ Նաիրա Ավանեսյանը երագել էր դառնալ Սյունիքի մարզպետարանի աշխատակից: Եվ նրա երազանքն ի կատար անվեց տարիներ առաջ: Հիմա նա մարզպետարանին նայում է ոչ թե դիմացի զբոսայգու ճտարանից՝ անուրջի մեջ ընկած ու կարոտով, այլ՝ ներսից: Լավ, խելքը աշխատողի համբավում, երբ անչափահասների հետ տարվող աշխատանքի համակարգողն էր... Նշանակվելով կրթության վարչության պետ՝ միանգամից կերպափոխվեց եւ դարձավ խոչընդոտ մարզի հանրակրթության ճանապարհին: Լինելով նաեւ սպորտի ու երիտասարդության գործերի թիվ մեկ պատասխանատուն՝ մեկ տարվա ընթացքում զոնե մեկ ռոպե չնվիրեց այդ ոլորտներին:

Կրթության, երիտասարդության եւ սպորտի վարչության պետի պաշտոնում նրա հետագա աշխատանքի հանդուրժումն ուղղակի անթույլատրելի է, եթե, իհարկե, մենք լուրջ ենք վերաբերվում մեր երեխաների կրթության ու դաստիարակության գործին, սպորտին ու երիտասարդությանն առնասարակ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ. «Մեղրեցին մեծ հարգանք է տաճում զինվորի հանդեպ, սիրում սահմանապահ ջոկատը, ջոկատն էլ ժողովրդին է սիրում»

Օգոստոսի 23-ին Մեղրիում տեղի ունեցավ ուշագրավ մի հանդիսություն: Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատարությունը, սայալական անձնակազմի ներկայացուցիչները, ինչպես էլ տարածաշրջանի համայնքների ղեկավարները հավաքվել էին Տիգրան Դանիելյանի թոշակի անցնելու կապակցությամբ գործարանն ու Մուսկվա տեղափոխվելու առիթով:



Երկար տարիներ զբաղեցնելով սահմանապահ ջոկատի անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների բաժնի պետի պաշտոնը՝ փոխգնդապետ Տիգրան Դանիելյանը լավագույնս է կատարել իր պարտականությունները եւ սահմանապահ ջոկատի ու տարածաշրջանի համայնքների, հասարակական կազմակերպությունների ու տնտեսվարող սուբյեկտների հետ ապահովել սերտ համագործակցություն, ինչի համար էլ հեղինակություն է վայելում Այունյացի մարզում:

Ծառայության ընթացքում Տիգրան Դանիելյանն աշխատել է միմյանց հաջորդող ութ հրամանատարի հետ, ովքեր ըստ արժանավայել են գնահատել նրա աշխատանքը: Փոխգնդապետի աշխատանքը բարձր են գնահատել նաեւ ՌԴ եւ Հայաստանի Հանրապետության բարձր իշխանությունները:

Օգոստոսի 23-ի հանդիսությանը մասնակցում էին նաեւ «Այունյաց երկիր» թերթի ներկայացուցիչները:

Այդ օրն էլ զրոյց ունեցանք Տիգրան Դանիելյանի հետ:

- **Պարոն Դանիելյան, «Այունյաց երկիր» թերթի խմբագրականի անունից շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ մոտ տասը տարի վա ջերմ, բարիորդացիական հարաբերությունների համար: Ճիշտ է, այդ հարաբերության ջատագովը նաեւ գործնասի հրամանատարներն են եղել, բայց դրա կերտողն ու, կարելի է ասել, դարբինը Դուք եք եղել: Անկեղծորեն պետք է նշենք, որ Ձեր հեռանալուց հետո ինչ-որ բան կպակասի Մեղրու սահմանապահ ջոկատում, բայց համոզված ենք, որ Ձեզանից հետո էլ լավագույն ավանդույթները կշարունակվեն: Տարիների ընթացքում Ձեր գործունեության կարեւոր հատկանիշներից մեկը թափանցիկ է եղել, որ այսօր խնդիր է շատերի համար:**

- Գիտե՞ք ինչ, եթե ամեն ինչ արվում է օրենքի սահմաններում, այդտեղ թափանցիկությունից բացի այլ բան լինել չի կարող: Եթե օրենքով նախատեսված է հրապարակային դարձնել այս կամ այն երեւոյթը, բացարձակ անհրաժեշտ չեն փակ օղակներ, որովհետեւ տրված հրամաններում մշտապես նշվել են

հրապարակայնության սահմանները: Եթե յուրաքանչյուր ոք գիտի իր տեղն ու դերը, անհրաժեշտ չէ ինչ-որ բան թաքցնել: Թաքցնելու բան առանձնապես չունենք էլ. ժողովրդից ի՞նչ պիտի թաքցնես, երբ դու ծառայում ես նրան՝ զինղեկերի հսկելով սահմանը, ապահովելով նրա անվտանգությունը: Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք, որ «Այունյաց երկիրը» հայոց պետության հզորացման, հանրապետության սահմանների անվտանգության ապահովման, հայաշուկայի դարավոր բարեկամության հետագա խորացման ջատագով է: «Այունյաց երկիրը» վարուց նաեւ մարզի հոգեւոր-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի լուրջ բարդարդիչներն են: Եվ մենք չէինք կարող չհամագործակցել նման լրատվամիջոցի հետ: Այդ հարթակից էլ ժամանակ առ ժամանակ ներկայացնում ենք մեր գործնասի առօրյան:

- **Եվ քանի՞ տարի ծառայելուց հետո եք թողնում Մեղրու սահմանապահ ջոկատը:**

- Համարյա 22 տարի է, ինչ ծառայում եմ Մեղրու սահմանապահ ջոկատում: Մինչ այդ երկու տարի ծառայել եմ խորհրդային բանակում՝ Մերձբալթիկայում: 1992 թվականին պատերազմական ժամանակներում եմ այստեղ անցել ծառայության՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: Չեղագայում սովորել եմ սահմանապահ գործերի Մուսկվայի ինստիտուտում, որից հետո անցել վերապատրաստման դասընթացներ Մուսկվայի սահմանապահ ակադեմիայում: Վերջին տարիներին Մեղրու սահմանապահ ջոկատի անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների բաժնի պետն եմ:

- **Մեր պետության ու ժողովրդի համար դժվարին այդ ժամանակներում՝ 1992-ին, ի՞նչը Ձեզ բերեց Մեղրու սահմանապահ ջոկատ:**

- Ծանր պատերազմական օրեր էին: Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը նոր էի ավարտել եւ նպատակ չունեի լքել հայրենիքս: Կապանի հրետակոծություններից ՇԱՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԷՆ ԷՑ 10

Հանգստանալու մասին

Մեղրասարի ոսկու հանքավայրը

Մեղրասարի ոսկու եւ արծաթի հանքավայրը շահագործող ընկերության սեփականատերերից մեկը ՀՀ վարչապետի խորհրդական Համլետ Գրիգորյանն է: Նա էլ իր որդիները մեծ բաժնեմաս ունեն «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ում, որը նախատեսված է մեղրադեղի բաց հանքավայր շահագործել Այունյացի մարզի Մեղրասարի տարածքում:

«ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ն օրերս բնագնահատական փորձաքննության է ներկայացրել Այունյացի մարզի Քարասար եւ Պրիխտեպտովոյի (Մեղրասար) ազնիվ մետաղների երեւակումուն հանքաքարի փորձնական հանույթի տեխնոլոգիական մշակման եւ Տաշտուն համայնքի վարչական տարածքում հանքաքարից ոսկու եւ բազմամետաղների կործան փորձարարական գործարանի կառուցման նախագծերը:

Հանքավայրը Այունյացի մարզի Լիճք եւ Տաշտուն գյուղերից հեռու է ընդամենը 5 կմ: Այն նախատեսվում է շահագործել բաց եղանակով՝ 7.5 տարվա ընթացքում: Զբաղեցնելու է 73 հա տարածք, որից լցակայանի տարածքը կզբաղեցնի դրա համարյա կեսը՝ 33.5 հա-ն:

Այս ընկերությունը հանքավայրի շահագործման իր ծրագիրը բազմաֆիզ խախտումներով է սկսել, որոնց «Հետք» արդեն անդրադարձել է: Անցյալ տարվա հուլիսին ՀՀ բնապահպանության նախարարությունը Այունյացի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի շինարարության համար «ԱՏ-մետալս» ՍՊԸ-ի նկատմամբ կայացրել էր ընկերության գործունեության դադարեցման որոշում, քանի որ ընկերությունը սկսել էր փորձարարական համալիր կառուցել՝ չունենալով բնապահպանական փորձաքննության եզրակացություն: Սակայն որեւէ այլ պատասխանատվության ՄՊԸ-ն չէր ենթարկվել:

Ավելին, չնայած «ԱՏ-մետալս»-ը չունեի փորձաքննության եզրակացության արդյունքները, դեռեւս 2013թ. մայիսի 23-ին ՀՀ կառավարությունը որոշել էր արտոնել ընկերությանը «ԱՏ-մետալս» ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում՝ 2013 թվականի մայիսի 30-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ ներմուծվող 300 միլիոն դրամը գերազանցող արժեքով ապրանքների՝ համաձայն հավելվածի, մաքսային մարմինների կողմից հաշվարկվող ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը հետաձգել էր մինչեւ 2016թ. մայիսի 30-ը: Ընկերությունը շուրջ 3 մլն դոլարի ներդրում է խոստացել եւ 270 հազար դրամ միջին աշխատավարձով 180 աշխատատեղ:

Ովքեր են շահույթ ստանալու հայկական ոսկուց եւ արծաթից

Այժմ տեսնենք, թե ինչու է այս ընկերությունն արտոնյալ եւ ովքեր են իրականում հայ-ռուսական «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ի բաժնետերերը:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների՝ ռուսական բաժնեմասը «ԱՏ-մետալս»-ում 50.2% է, մնացյալ 49.8-ը՝

հայկական է:

45%-ի սեփականատերը հայկական «Վենտուրա» ՍՊԸ-ն է:

4.8%-ն էլ պատկանում է Կարեն Համլետի Հովսեփյանին:

Մնացյալ 50.2-ը հավասարապես կիսում են նույն հասցեում գրանցված ռուսական երկու ընկերություն՝ «Ավիատեխնոլոգիա գրուպ» ՍՊԸ-ն եւ «Ավիատեխնոլոգիա ԳԱՍ» ՓԲԸ-ն:

45%-ի սեփականատեր «Վենտուրա» ընկերությունը գերազանցապես ՀՀ վարչապետի խորհրդական Համլետ Գրիգորյանի ընտանեկան բիզնեսն է: Այս ընկերությունում Համլետ Գրիգորյանն ու իր երկու որդիները՝ Վարդան եւ Կարեն Հովսեփյանները, 30-ական տոկոսի բաժնետեր են, մնացյալ 10%-ը բաղաձայն է գրանցված Հայկ Մեծկունյանին: Վերջինս Համլետ Գրիգորյանի ընկերն է «ԱՏ-մետալս»-ի գործադիր տնօրենը:

«ԱՏ-մետալս» ՍՊԸ-ում 4.8% բաժնեմասի սեփականատեր Կարեն Հովսեփյանը, ինչպես արդեն հասկանալի է, վարչապետի խորհրդականի որդին է, ինչը մշակում է, որ ոսկու հանքավայրը շահագործող «ԱՏ-մետալս» ընկերության 49.8%-ը (բացառությամբ «Վենտուրա»-ում 10% Հայկ Մեծկունյանի բաժնեմասից) Համլետ Գրիգորյանի ընտանիքին է:

Մուսկվայում 2007-ին գրանցված «Ավիատեխնոլոգիա գրուպ» ՍՊԸ-ի հիմնադիրները եւ մասնակիցները ռուսներ են՝ Սերգեյ Արնոլով, Գենադի Մուլին, Սերգեյ Մուլին, Պավել Խանչին: ՌԴ ընկերությունների ռեգիստրի տվյալների համաձայն՝ այս ընկերությունը գիտահետազոտական գործունեություն է իրականացնում բնական եւ տեխնիկական գիտությունների ոլորտներում, արտադրում է տարբեր մետաղյա իրեր, զբաղվում է արդյունաբերական նախագծերով, արդյունաբերական շինարարությամբ, բեռնափոխադրումներով, վարկերի տրամադրմամբ, մետաղյա թափոնների մշակմամբ, գեոդեզիական եւ քարտեզագրական եւ մի շարք այլ գործունեություններով: Խմբից են պատկանում ռուսական ավիացիայի համար սարքավորումներ արտադրող գործարաններ: «Ավիատեխնոլոգիա ԳՅՍ» ՓԲԸ-ն նույն հասցեում է գրանցված եւ հանդիսանում է նույն «ԱՏ խմբի» ընկերություն: Բաժնետերեր են՝ «Ավիատեխնոլոգիա ԳՅՍ» ՍՊԸ-ն (խոշոր բաժնետերը), «ՌՊՏ» ՍՊԸ-ն եւ «ՆՏ» ՍՊԸ-ն:

«Ավիատեխնոլոգիա ԳՅՍ» ՓԲԸ-ն, սակայն, 2002թ.-ից ներգրավված է քրեական գործերում՝ Նիժնեգորոյան մարզի նահանգապետի նախկին տեղակալ Վիկտոր Կլոչայի եւ Կուլեբանյանի մարզի նահանգապետ Նիկոլայ Ռյաբիկինի մասնակցությամբ, ովքեր փորձել են տիրանալ «Ավիատեխնոլոգիա ԳՅՍ» ՓԲԸ-ի որոշ բաժնեմասին: Վիկտոր Կլոչայն եւ Նիկոլայ Ռյաբիկինը տարբեր ժամանակներում եղել են «Ավիատեխնոլոգիա ԳՅՍ» ՓԲԸ-ին պատկանող Կուլեբանյան մետալուրգիական գործարանի գլխավոր տնօրեն: Գործարանն ունի ավիացիայի համար հատուկ արտադրանքներ օդարկելու մեծաշնորհ: Այն ստրատեգիական մշակակություն ունի Ռուսաստանի թե ռազմական, թե քաղաքացիայի համար:

Սերգեյ Մուլինի մասին ռուսական մամուլում հրապարակումները



Համլետ Գրիգորյանն էլ իր որդիները մեծ բաժնեմաս ունեն «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ում

հակասական են: Նա անցել է նաեւ մերձնուկլյան Ստոլպինոյի մետալուրգիական գործարանի 50 մլն դոլար վարկային պատմության առնչվող քրեական գործով, երկրից հեռացել է եւ ապրել Լիխտենշտեյնում: Դեռախուզվել է ինտերպոլի կողմից:

Որտեղից հայտնվեցին ռուսները

Ռուս գործընկերը, ինչպես բացատրեց վարչապետի խորհրդական Հ.Հովսեփյանը, ՌԴ կառավարության՝ պետական բաժնեմասով «Ռոսավիա» ընկերությունն է ու մասնավոր անձինք: Ռուսների հետ Մեղրասարի հանքավայրի շահագործման նախաձեռնողն անձամբ վարչապետի խորհրդական Համլետ Գրիգորյանն է եղել: Այդ մասին խորհրդական Հովսեփյանը խոստովանեց «Հետքի» հետ զրույցում: Խարկովի իրավաբանական ինստիտուտն ավարտելուց հետո ռուս-նոդական ընկերներ են մնացել, եւ երբ դժվարություններ է ունեցել ներդրումներ անելու հարցում, դիմել է նրանց օգնությանը: «Դրեւ են տունը, տեղ, ամեն ինչ, վարկ եւ վերցրել, ռիսկի եւ գնացել, փող եւ դրեւ, հետո պարտմորի խնդիր ունեի, կարողացա գտնել մարդիկ, որոնք վստահեցին, եւ եկան ներդրումներ արեցին Հայաստանում», - պատմում է Համլետ Գրիգորյանը:

Սակայն պետական գրանցման փաստաթղթերում ընկերությունների հիմնադիր կամ մասնակից պետական բաժնեմաս ունեցող որեւէ ընկերություն չկա: Թերեւս, վարչապետի խորհրդական ռուսական պետական բաժնեմասը շեշտում է իր գործընկերների լրջությունը ցույց տալու համար:

Իր գործընկերների քրեական պատմությունների մասին Հ. Հովսեփյանը տեղյակ է: Սակայն ՌԴ գլխավոր դատախազությունից ճշտել է, որ որոշում է կայացվել եւ «դրանց լրիվ մաքրել են»: «Մուլին եղբայրներն արդարացվել են, իրենց գործընկերներն են սրիկաներ, ուզեցել են խել գործարաններն իրենցից, հիմա դրանք մաքրվել են: Նորմալ մարդիկ են եւ պատաստական են տրամադրված Հայաստանի եւ ժողովրդի նկատմամբ, նույնիսկ իրենք են առաջարկել սոցիալական ծրագրեր իրականացնել» - ասում է Հ.Հովսեփյանը:

Ինչպես նշում է խորհրդականը՝ ռուսական կողմն արդեն 12 մլն դոլարի ներդրում է կատարել, երկրորդ ծրագրով կրկնակի

Ե կան եռակի պետք է արվի. դեռ պարզ չէ, քանի որ նախագծերը տակավին ավարտին չեն հասցրել: «Միայն ոսկու հանքավայր չէ, այնտեղ մենք բազմաբնակարան օրգանիզմ ունենք՝ գործարան ենք կառուցել, արդեն ավարտին ենք հասցրել, կառուցելու ենք երկրորդ գործարանը, որը ռեգիոնում լինելու է միակը: Մեր հանրապետության համար շատ լուրջ ներդրում է, որը ռուսական կողմն անում է մեզ հետ միասին», – ասում է խորհրդակցանը: Համլետ Հովսեփյանը հավաստիացնում է, որ Հայաստանում առաջին անգամ այնպիսի տեխնոլոգիա է կիրառվելու, որը որևէ բնապահպանական վտանգ չի ստեղծի տարածքի համար: Պայթեցումներ չեն լինելու, քանի որ հողն այնպիսին է, որ պայթեցման անհրաժեշտություն չկա: «Ես այն մարդը չեմ, որ թույլ տամ այդպիսի բան, դուք գիտեք իմ անցած ճանապարհը, եթե մի քիչ իմ կենսագրության հետ ծանոթ լինեք, կիմանաք», – արծազանքում է Հ.Հովսեփյանը՝ բնապահպանական ռիսկերի մասին մեր հարցազրույցում:

Հ. Հովսեփյանն ասում է, որ տարածքի գյուղերը քանդված ու ավերված էին: Իսկ Նախիջևանի սահմանակից Տաշտուտում մարդ չէր մնացել, հիմա կամաց-կամաց վերադառնում են, գյուղը սկսել է շնչել: Լիճքում ու Տաշտուտում նախատեսվել են սոցիալական օրգանիզմի իրականացումը, լուծել դարձրող, գազի, ճանապարհների խնդիրները: «Եթե դա չանենք, բա ով անի, ոչ դրա մասին պետք է մտածենք, ոչ քեզ գողոռանք, փորձենք խանգարել եւ այլն: Յիմա մենք մավթ չունենք, գազ չունենք, մենք էլ ունենք սա», – հիմնավորում է Հ.Հովսեփյանը:

Այժմ գործարանի փորձարկման գործընթացներն են. չինացիներն են եկել՝ իրենց սարքավորումները տեղադրելու: Ըստ Հովսեփյանի՝ նախատեսվում է ավարտել այդ աշխատանքները եւ սեպտեմբերի սկզբներին սկսել շահագործումը:

Հարցին, թե արդարացի է արդյոք ներդրողների հույսերը հանքաքարի մասով, Համլետ Հովսեփյանը ասում է. «Որոշ չափով ոչինչ, ինչ-որ մենք մտածում էինք, կա: Բացի դրանից, նոր նյութեր էլ ենք հայտնաբերել, հեղինակային իրավունքը ստացել ենք, դրա մասին էլ կհայտնենք լրացուցիչ»:

Բիզնես գործունեությունը չի՞ խանգարում վարչապետի խորհրդակցանի գործունեությանը՝ մեր հարցին Համլետ Հովսեփյանը պատասխանում է. «Ոչ, դուք գիտե՞ք՝ վարչապետի խորհրդակցանը ինչ է, քիզնեսը մասնավոր..., աշխարհում դուք գիտեք ընդունված է՝ մասնավոր մարդիկ աշխատում են երկրի նախագահներ, մասնավոր բանը ինչ է: Ես ներդրում ունեմ արած, ունեմ ակցիա (բաժնետոմս-հեղ), ես այնտեղ ոչ կառավարման եմ մասնակցում, ոչ էլ չգիտեմ ինչի, ընդհակառակը՝ օգնում եմ ինչ-որ բանով, որպեսզի ավելորդ խոչընդոտներ չառաջանան»:

Մեր դիտարկմանը, թե կառավարմանը չմասնակցելով տիրապետում է հանքավայրի հետ առնչվող բոլոր մանրուքներին, պատասխանում է. «Իհարկե ամեն ինչին տեղյակ եմ, ո՞նց կարող է տեղյակ չլինեմ, ինչ խաբե՞մ: Պարտավոր եմ տեղյակ լինելու, ի՞նչ անօրեն բան եմ անում, որ տեղյակ էլ չլինեմ: Մեր երկրի համար այնքան բան է արվում այստեղ, բա ներդրումներ ենք ներդրվում, աշխատատեղեր ենք ստեղծում, ուզում ենք, որ մի քիչ մեր երկիրն էլ շնչի, ինչ է՝ վատ բան ենք անո՞ւմ»:

Քրիստինե Աղալարյան
Մարինե Մաղաթյան
<http://hetq.am/>

Ի՞նչ է սպասվում Մեդրուն.

«Տարիներ անց մարդիկ կտեսնեն, որ զավակ չեն ունենում, հողի բերրիությունն է վերացել, եւ աստիճանաբար կլքեն տարածքը»

Օգոստոսի 21-ին Տաշտուտի գյուղապետարանում տեղի են ունեցել «Ար-Մեդալ» ՄՊԸ-ի կողմից ներկայացված ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ հասարակական լսումներ: Բնապահպաններն այս լսումներն անվանում են «Թափերական ներկայացում»: Խնդրի շուրջ գրուցեցինք Հայաստանի Կանաչների միության նախագահ Հակոբ Սանասարյանի հետ, ով նույնպես մասնակցել է լսումներին:

– Պարոն Սանասարյան, լսումներն ինչպե՞ս անցան, ի՞նչ ցույց տվեցին:

– Լսումներն ամբողջությամբ բեմականացան էր: Ցույց են տալիս, թե ժողովրդի կարծիքը հաշվի են առնում, բայց այդ լսումներին գյուղի բնակիչներին ներկա էին միայն հանքավայրում աշխատողները: Այսինքն՝ գյուղի կարծիքն իրականում հաշվի չեն առնում: «Ար-Մեդալ» գրասենյակի պատասխանատու Հայկ Մեծխումյանը ներկայացրեց, որ այս հանքավայրի շահագործումը բնակչության համար կունենա խիստ դրական նշանակություն, տարեկան 100-110 աշխատատեղ կստեղծվի՝ բարձր վարձատրությամբ, առաջին ծրագիրը կտեսի 7,5 տարի: Չմոռացան ասել նաեւ, թե տվյալ հանքավայրի շահագործումն ընդհանրապես համարյուրաբերության համար ունի գիտական մեծ նշանակություն: Սակայն վերջում, երբ ես փորձեցի նախագծի մասին որոշ բաներ ասել, չքողեցին անգամ 2 րոպե խոսել, մինչդեռ մյուսների համար սահմանափակում չկար: Ես բերում էի հիմնականում նախագծային տվյալներ: Նախ՝ այդ հանքավայրը Մեդրուն լեռնաշղթայի ամենագագաթային մասն է, ամբողջ ողնաշարը 2 կողմի համար ջրագոյացման ավազան է. մի կողմից՝ դեպի Քաջարան, մի կողմից՝ դեպի Մեդրու: Նրանք այդ լեռնակատարը ոչնչացնում են, մինչեւ 160մ խորությամբ պետք է քանդեն: Հայտնի չէ՝ կա՞ մի կարգ, որը թույլ է տալիս լեռնակատարներն իջեցնել, քանդել: Մեծխումյանն ասում է, թե իրենց գործունեությունը բաց է, բայց լսումներից հետո նա մերժեց մեր խնդրանքը եւ թույլ չտվեց մուտք գործել փորձարարական գործարան: Նախկինում ընդհանուր նախագծերում ընդգրկվում էին հանքավայրի, պղծաբարի եւ վերամշակող գործարանի նախագծերը: Այս երեքը միասին մեկ օրգանիզմ է: Իսկ «ԱՏ-մետալ» ընկերությունը նախագիծը կտոր-կտոր է ներկայացնում: Այդպիսի կարգ որևէ օրենքում չեն գտել: Անթույլատրելի է նախագիծը ծվատած՝ մաս-մաս ներկայացնելը, իսկ Բնապահպանության նախարարությունն ընդունում ու քննարկման է դնում ոչ օրինական այդպիսի նախագծերը:

– Ի՞նչ խնդիրներ կծագեն հանքի շահագործման դեպքում:
– Ներկայացնում են, թե հանքավայրը շատ շահեկան է թե պետության, թե գյուղի համար: Բայց այդ հանքավայրի ներքին միջուկ գտնվում է ամբողջ Մեդրուն տարածաշրջանի ջրագոյացման համակարգը: Սա խախտվում է, քանի որ հանքաքարը հանելու են պայթեցումներով, որի ժամանակ առաջանում են ճաքեր, եւ ջուրը կարող է իջնել ավել

լի խորքային միջեր: Նաեւ՝ այդ ջուրը սովորական ջուր չի լինելու, նրա մեջ կլինեն լուծված ծանր մետաղների աղեր: Այսինքն, այն կարող է աղտոտել ստորգետնյա ջրային ավազանը: Վերամշակվելիք 373 հազար տոննա հանքաքարի մեջ կա մոտ 1.5տ ոսկի եւ մոտ 4տ արծաթ: Տարեկան վերամշակվելու է 50 հազար տ հանքաքար: Եթե ոսկին ու արծաթը մոյմիսկ 100%-ով կորզեն, սպա կստանան մոտ 64 մլն դոլարի եկամուտ: Բայց նրանք ամեն 1 տ հանքաքար հանելուց 189տ դատարկ ապարներ լցնելու են բնության մեջ: Միջինը ստացվում է 64-66 մլն տ մակաբացման ապարներ, որի համար ավելի քան 800 մլն դոլար հարկ պետք է մուծեն պետությանը, սակայն աշխարհի տերերի կողմից Հայաստանին պարտադրված օրենքները հանքարդյունաբերողներին ազատում են այդ հարկերը վճարելուց: Նախագիծը պարզ երեսում է, որ սպասվելիք եկամուտը 64 մլն դոլար է, իսկ պետությանը հասցվելիք վնասը՝ միայն մեկ թափոնի գծով՝ 800 մլն դոլար: Ըստ նախագծի՝ խախտվելու, ոչնչանալու է 73 հա հողատարածք, այն դառնալու է հանքային խոռոչներ, կամ թունավոր թափոններով ծածկված: Եվ հենց իրենք հաշվարկել են տարեկան մոտ 555 մլն դրամի տնտեսական վնաս՝ միայն խախտված հողերի եւ մթնոլորտային օդի աղտոտման համար, որը 7.5 տարիների համար կկազմի մոտ 4.2 մլրդ դրամ կամ 10.4 մլն դոլար: Իրենք իրենց եկամուտը կստանան՝ կինոսան, իսկ դրանից հետո շատ լավ հասկանալի է, որ Տաշտուն գյուղը եւ դրանից ցածր միջերում ենք բնակավայրերը դանդաղորեն կամայանան: Հանքը շահագործելուց զոնե կարող են ջրահեռացում կատարել, բայց հետո այդ դառնում է անտեր տարածք, բոլոր մթնոլորտային տեղումները լցվելու են հանքախորշեր կամ դատարկ ապարների վրա, դրանց մեջ լուծվելու են ծանր մետաղների աղերը եւ գնալու են՝ ուր պատահի, իսկ փոշին կսփռվի վարելահողերի ու արոտավայրերի վրա: Ընդ որում՝ նախագծում գրել են, որ այս տնտեսական հաշվարկները կատարվում են հենց այնպես, քանի որ դրանք մուծման ենթակա չեն: Իրոք, տնտեսական վնասը գուտ ձեւակաւ է հաշվարկվում, քանզի հանքարդյունաբերությանը զբաղվողներին ազատել են նաեւ այդ հարկի վճարումը:

– Ի՞նչ եղանակով է վերամշակվելու հանքաքարը:

– Հանքաքարը վերամշակելու են տարրավազման եղանակով, օգտագործելու են թիոմիզանյութ (թիոկարբամիդ): Այս եղանակն աշխարհում այնքան էլ տարածված չէ: Հետագայում տարածքում, որտեղ տարրավազման կույտն է հավերժորեն մնալու, անընդհատ ծծմբաջրածին է անջատվելու, եւ հոտած ձվի հոտ է տարածվելու: Տաշտունի տարածքը հայտնի է իր սեյսմատեկտոնիկ անհամգիտ փոճակով, շատ հայտնի է Տաշտունի բեկվածքը: Ի՞նչ է սպասում այդ գյուղին եւ նրանից ցածր միջերում եղած բնակավայրերին: Փաստորեն, այդ հանքավայրի շահագործումը եւ Տաշտուն գյուղի մոտ հանքաքարի վերամշակման արտադրության կառուցումն ամբողջովին կլուծի ոչ միայն Տաշտունի խնդիրը, այլեւ ներքեւ ընկած ողջ ջրավազանի հարցը: Տաշտունից մինչեւ Մեդրու մոտ 30 կմ է, բայց շատ մեծ թեքությամբ: Եվ նախագիծը կազմող «Ար-Մեդալ» ղեկավարությունն այս ամենը հրաշալիորեն գիտակցում է: Նրանք ուղղակի տեսնում են, որ ՀՀ-ում գոյություն ունեւորված պայմանները կան, մասնակցում են այդ գոյութային: Բայց այդ ընթացքում սուտ են խոսում ու նախագիծը ներկայացնում որպես բարիք՝ թե՛ ՀՀ-ի, թե՛ բնակչության համար:

– Ըստ Ձեզ, եթե ԽՍՀՄ տարիների հանքի շահագործումն ինքնաձախաձայնակող չի համարվել, ինչո՞ւ է հիմա պետությունը թույլ տալիս շահագործել:

– ԽՍՀՄ տարիներին Հայաստանի տարածքը շատ լավ ուսումնասիրվել է, ընդերքում հայտնաբերվել են բազմաթիվ օգտակար տարրեր, բայց դրանց պարունակությունն այնպիսին է, որ դրանց կորզումն ծախսածակող չէ: Իսկ հիմա հարկերից ազատել են ու հանքերեականը դարձրել են հանք: Եվ Տաշտունը միակը չէ: Պաշտոնյաները ամբողջ հանքերեականներն իրար մեջ բաժանելով՝ վաճառում ու վերավաճա-

նում եւ շահագործում են:
– Հանքի շահագործման դեպքում ի՞նչ կլինի տարածքում առկա ցրված ուրանի հետ:
– Սկսած Ագարակից, Կալեր, Վանք գյուղերի, Քաջարան, Կապան քաղաքների, Փխրուտ գյուղի ողջ տարածքում ցրված ուրան կա: Այդ մասին բազմաթիվ հաշվետվություններում ու գրքերում գրված է, բայց այսօր ոչ այդ հաշվետվությունների մասին խոսք կա, ոչ էլ այդ գրքերի, որոնց հղում անելը կարծես արգելված է: Եթե հանկարծ հղում անես, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը, ՀՀ նախագահական համակարգը միաբերան ասում են. «Ո՛չ, այդ քարտեզներն ու հաշվետվությունները սխալ են»: Իրականում, եթե այդ հանքը հանեն, միայն այս մի փոքր՝ 370 հազար տ հանքաքար հանելուց առաջանում է 64-66 մլն տ դատարկ ապար, որոնց մեջ եղած ցրված ուրանը սփռվելու է շրջակա միջավայր: Ընդհանրապես, Մեդրուն տարածաշրջանի գյուղերի ապագայի մասին խոսք լինել չի կարող: Իհարկե, մարդիկ կարող են արբել, ինչպես, օրինակ, Չեռնոբիլում 30 կմ տրամագծով արգելված գոտի կա, գյուղերը հողով ծածկված են, բայց այնտեղ խիստ սահմանափակ թվով ապրող մարդիկ կան: ԽՍՀՄ-ի ժամանակ զոնե ասում էին՝ այս հանքը պետք է շահագործենք, պետք է գյուղը տեղափոխվի: Իսկ այսօր 1 կոպեկ չեն ուզում ծախսել գյուղերի տեղափոխման համար: Տարիներ անց մարդիկ կտեսնեն, որ զավակ չեն ունենում, հողի բերրությունն է վերացել, եւ աստիճանաբար կլքեն տարածքը: Եվ մենք խոսում ենք մարդու իրավունքների մասին: Այսօր «մարդու իրավունք» ասելով՝ հասկացվում են պետական պաշտոնյայի եւ նրա մերձավորների իրավունքները, որոնք, փաստորեն, ի չիք են դարձնում Հայաստանը եւ հայ ժողովրդին: «ԱՏ-մետալ» 2013 թ. Ապրիլից, չունենալով որևէ փաստաթուղթ են թույլտվություն, սկսել է հանքաքարի վերամշակման արտադրության կառուցման եւ հանքահանման աշխատանքները: Կանաչների միությունը դիմել է Բնապահպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ նախագահին՝ մշելով, որ առանց նախագծի, առանց փաստաթղթերի շինարարություն հանքահանում է իրականացվում, պահանջելով պատասխանատվության կանչել «ԱՏ-մետալին»: Որոշ ժամանակ անց Մեդրուն դատախազությունից ստացանք պատասխան, որի մեջ ասվում է, որ Տաշտունի գյուղապետի մեղքն այնքան մեծ է, որ պատասխանատվության ենթարկեն, դրա համար գործը կարճվում է: Այսինքն՝ սակայնության ամենավերին կետն է: Նոր մշանակված գլխավոր դատախազին եւս դիմեցինք՝ կցրելով նախկին պատասխանը, մինչ օրս որևէ պատասխան չկա:

– Ձեր կարծիքով՝ հանքը ե՞րբ կսկսեն շահագործել:

– Նրանք արդեն շահագործում են, թեեւ թույլտվությունը դեռ չկա: Ասում են՝ փորձական գործարանն են շահագործում, բայց ոչ մեկը ջրագոյացման տարածքում փորձական գործարան կառուցելու իրավունք չունի: Իրենց արածը կոպիտ խախտում է: Եվ ի՞նչ ասել է՝ «փորձական գործարան»: Փորձական ուսումնասիրությունները արվում են ինստիտուտների եւ գիտական այլ հաստատությունների լաբորատորիաներում:
– Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս է հնարավոր կանխել այդ հանքի շահագործումը, ելք տեսնո՞ւ եք:

– Հարկավոր է՝ հասարակությունը սա գիտակցի եւ ընդվզի այս ապօրինությունների դեմ:
ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
31 օգոստոսի, 2014թ., 168.am

Անվանի գործերից

Արտաշես Գրիգորյան. Կենսագրական ակնարկ

Հայրենական մեծ պատերազմի դաժան փորձությունների միջոցով անցած խորհրդային ժողովրդի սոցիալական վիճակը հետպատերազմյան առաջին տարիներին դեռ շատ հեռու էր բավարարվելուց: Թերեւս դա էր պատճառը, որ ուսման ծարավ պատանին առժամանակ հրաժարվում է բուհ ընդունվելու նվիրական մտքից՝ փորձելով իր աշխատանքային վաստակով թեթեւացնել հայրական օջախի հոգսը:

Երկու տարի Քարաշենում աշխատելուց հետո՝ 1949թ., Արտաշես Գրիգորյանը տեղափոխվում է Գորիսի շրջանի Կյորու գյուղ եւ շարունակում մանկավարժական գործունեությունը՝ որպէս մաթեմատիկայի ուսուցիչ: Այստեղ նա 1952թ. ամուսնանում է եւ ուսումնական տարին ամփոփելուց հետո նույն թվականի ամռանն ուսումնառությունը շարունակելու մտադրությամբ տեղափոխվում Երեւան:

Արտաշես Գրիգորյանի հայտնվելը Երեւանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի ուսանողների շարքում իսկական անակնկալ էր նրա մաթեմատիկական ընդունակությունները գնահատող մարդկանց համար: Սակայն մտերիների կողմից մասնագիտական այդ շրջադարձն ընկալվում է որպէս օրինազափ իրողություն. վերջիններս քաջատեղյակ էին խոր վերլուծությունների եւ համապարփակ ընդհանրացումների հակված նրա հզոր երեւակայությանը, ինչպէս նաեւ գիտելին, որ նա ազատ ժամերին զայթակրված հափշտակությամբ սկսել է ուսումնասիրել հայոց պատմությունը:

Երջանիկ պատահականությամբ Արտաշեսի ուսանողական տարիները (1952-56թթ.) համընկնում են ազգային զարթոնք վերապրող հայ ժողովրդի պատմության այն ժամանակահատվածի հետ, երբ Ստալինի մահը հանդիմանի բռնադատված գիտության եւ մշակութային աշխարհի բազում կարկառուն գործիչների ազատություն էր պարգևել...

Այդ օրերին համամարդկային արժեքներով ոգեշնչված հասարակական աշխուժացած մթնոլորտում թեւածում էր ազգային ինքնագիտակցությունը: Հրատարակչությունները սկսել էին արգելված համարվող գրողների ու պատմաբանների երկերը հրատարակել: Ստալինյան ռեժիմն արհամարհած Չարենցի գրքերի համար գրախառնութեամբ հերքեր էին գոյանում: Նեճագաղվ գրապարտանքներով սպանված Ակ սել Բակունցին գրական ամբիոններից սկսել էին հայ ժողովրդի խոշորագույն արձակագիր եւ գեղարվեստական խոսքի անգուգական վարպետ համարել: Պարզվել էր նաեւ, որ Լեոն ոչ թէ ազգայնամուլ է, այլ պարզապէս իր ժողովրդի արժանապատվությամբ տոգորված հայ մեծագույն պատմիչներից մեկը...

Կեղծ արժեքներից ձերբազատվելու, հասարակության ինքնամաքման այդ տարիների միտումները վերահիմնադրում են Արտաշես Գրիգորյանի աշխարհընկալումներն ու նրա աշխարհայացքի ձեւավորման վրա, որական առումով՝ խոր ազդեցություն թողնում:

Ուսանողական կյանքի անհոգ զվարճանքները շրջանցում են նրան: Պատճառը ոչ միայն առաջացած



Ծնվել է 1929թ. սեպտեմբերի 14-ին Գորիսի շրջանի Տեղ գյուղում, Պետական ծառայողի ընտանիքում: Հասնելով դպրոցահասակ սարիքի՝ 1936թ. սկսում է հաճախել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: Գերագույն գնահատականներով ամփոփելով 1943-44 ուսարին՝ ընդունվում է Գորիսի մանկավարժական ուսումնարանը, որն ավարտում է 1947թ.: Ուսումնարանն ավարտելուց հետո նա գործուղվում է Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի յոթնամյա դպրոց՝ մարձնասիկա դասավանդելու:

տարիքն էր կամ ամուսնական կարգավիճակը, այլև՝ պատմաբան դառնալու սեւեռուն ցանկությունը: Նրան համարյա ամեն օր կարելի էր տեսնել Երեւանի հանրային գրադարանում՝ զբաղված որեւէ պատմական կամ փիլիսոփայական աշխատության ուսումնասիրությամբ: Նրա հաճախակի այցելություններն ազգային արխիվներ աշխատակիցներին մոլորության մեջ էին գցել. վերջիններս չէին կամենում հավատալ, որ համառ երիտասարդը ոչ թէ դիսերտանտ, այլ ընդամենը դեռ պատմության ֆակուլտետի ուսանող է:

Բուհն ավարտելուց հետո, չընդունելով ինստիտուտում աշխատանքի տեղավորելու հարցում միջնորդությամբ հանդես գալու պատրաստ իրեն համակրող պրոֆեսորների առաջարկը, վերադառնում է Գորիս՝ աշխատանքի անցնելով ԽՆժՈՐԵՍԻ Գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպէս պատմության ուսուցիչ:

Ժամանակին տրված այն հարցին, թէ ինչու է մայրաքաղաքում աշխատանքի անցնելու հնարավորությունը մերժել, պատասխանել է. «Պատմաբանները ճգնափորների դասին են պատկանում: Բավականին գիտելիքներ ամբարած, սեփական ասելիքը շարադրելու պատրաստ, պատմության հարցերով զբաղվող անհատի համար բնակության վայրը երկրորդական գործն է: Համայնքն իր հայոց հսկայածավալ պատմությունը շարադրել է Կենտրոնիկի Սուրբ Ղազար վանքի մի անշուք սենյակում»:

Երեւի թէ իր աշխարհիկ խառնվածքը գյուղական խաղաղությամբ պարուրելու, կարողություններն առավելագույնս գիտության վրա կենտրոնացնելու մտահղացման արդյունք պետք է համարել նրա՝ գյուղ վերադառնալու որոշումը: Ինչեւիցէ: ԽՆժՈՐԵՍԻ Գյուղում

է նրա մանկավարժական գործունեության երկրորդ փուլը: Այստեղ նա աշխատում է տասներեք երկար ու ձիգ տարիներ՝ դասավանդելով պատմություն եւ հասարակագիտություն:

Գյուղական ժողովուրդը եկվորների հանդեպ դժվարահաճ է լինում, սակայն Արտաշես Աթայիչին այս գյուղը այնպիսի հարազատությամբ է ընդունել, որ նրան աշակերտած առավել երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից ոմանց միշտ էլ թվացել է, թէ նա իրենց գյուղացի է: ԽՆժՈՐԵՍԻ Գյուղում աշխատելու տարիներին Արտաշես Գրիգորյանը մտերմիկ հարաբերություններ է հաստատում հայ պատմագիտության հայտնի դեմքերից մեկի՝ ակադեմիկոս Սորոս Զասարյանի հետ: Մեծ հայագետի հորդորները, ով հանձն էր առել լինել նրա գիտական ղեկավարը, ցանկալի արդյունք են տալիս: 1965թ. պատմության եւ փիլիսոփայության ասպիրանտական «միջնունները» փայլուն կերպով հանձնելով՝ նա սկսում է աշխատել իր գիտական թեմայի վրա:

Թեկնածուական թեզի պաշտպանության հարցում նրա աքիլեյան գարշապարն օտար լեզվի միջնուն է դառնում: Հայրենի գյուղի դպրոցում նրա սովորելու տարիներին, մասնագետների բացակայության պատճառով, օտար լեզու չէին դասավանդում: Այժմ, հայտնվելով փաստի առաջ, նա սկսում է գերմաներենի այբուբենից, այն պահին, երբ նրա գրչի տակից դուրս եկած շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածներ էին լույս տեսել համրապետական ամսագրերում ու թերթերում:

1967թ. նրան որպէս պատմության եւ փիլիսոփայության մասնագետ, հրավիրում են Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղում աշխատելու: Հրավերքն ընդունում է մի վերապահմամբ, որ դպրոցը չի թողնելու:

Այդ տարիներին նա գնահատանքի է արժանանում նաեւ դպրոցական կրթության ասպարեզում: Արդյունքն այն է լինում, որ այն ժամանակների ընդունված կարգով՝ կոմունիստական կուսակցության շրջանային կոմիտեի երաշխավորությամբ (նա կոմկուսի անդամ էր դեռ ուսանողական տարիներից), 1969-70 ուստարում աշխատանքի է անցնում Գորիս քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի սանսավարի պաշտոնում:

Վարչական աշխատանքը սկսում է շատ ժամանակ խլել նրանից: Ծանր ու թեթեւ անելուց հետո, մեկ տարի անց, նա հրաժարվում է ինստիտուտի դասաժամերից՝ նախընտրելով դպրոցը:

Դառնալով ղեկավար աշխատող՝ Արտաշես Գրիգորյանը հանդես է բերում կազմակերպչական մեծ ունակություններ՝ առաջնորդվելով ոչ թէ վարչահրամայական մեթոդներով, այլ իր աշխատանքային մտեցումներում առաջնահերթությունը տալով փոխադարձորեն հարգալից, մարդկային հարաբերություններին:

Ուսնասավարի պաշտոնում իր աշխատած ինը տարվա ընթացքում նա եւ գերմաներենի չարաբաստիկ միջնունն է հանձնում, եւ գիտական թեմայի շարադրանքն է ավարտում, սակայն մարել էր գիտական կոչումների հանդեպ նրա երբեմնի ոգեւորությունը: Ուսուցիչներից ոմանց այն հարցին, թէ ինչու չի զբաղվում իր գիտական թեզի պաշտպանության հարցերով, երբ ամեն ինչ պատրաստ է, դառը ժպտալով պատասխանում էր. «Ասե՛ք թէ պաշտպանել եմ, ի՞նչը պիտի փոխվի: Իմ նպատակներն այդ ասպարեզում ավելի հեռուն էին միտված...»:

Իսկ մանկավարժության բնագավառում նրա հաջողությունները վերադասի կողմից վերստին ուշադրության են արժանանում: 1978-

1979 ուստարում նա ընտանավում է Գորիս քաղաքի 3-րդ միջնակարգ դպրոցի տնօրեն: Նոր միջավայրում աշխատանքային հարաբերությունների հետ կապված դժվարություններն Արտաշես Գրիգորյանը հեշտ էր հաղթահարում: Կոլեկտիվում բարոյախոզբանական առողջ մթնոլորտ ստեղծելու շնորհաշատ ծիրքով էր օժտված, որում անկասկած իր մասն ուներ նրա պատկառագրու կերպարի շուրջը...

Վեց տարի 3-րդ միջնակարգ դպրոցում աշխատելուց հետո նրան են վստահում 2-րդ միջնակարգ դպրոցի տնօրենությունը: Սիրով է ընդունում այդ տեղափոխությունը, որովհետեւ վերադառնում էր վաստակաշատ մի կոլեկտիվ, որի կայացմանը ժամանակակից իր մասնակցությունն էր ունեցել: Արտաշես Աթայիչի վերադարձը՝ 2-րդ միջնակարգը հարազատի գրկաբացությամբ է դիմավորում:

Ժողովրդական առաքինի բարեմասնություններով համեմված, հոգեւոր արժեքներով ապրող, մեծ նկարագրի տեր խոր անհատականություն էր նա, որի հուզառատ խառնվածքն ի գորու եղավ տարիներ ի վեր կողք կողքի պահել զգայուն եւ ղեկավար բառերում ամփոփված հասկացությունները: Նա համալրեց Գորիս քաղաքի՝ խորհրդային տարիների պատմության մեջ անջնջելի հետք թողած լեզունդար տնօրենների շարքը...

Նրան աշակերտած սերունդների հուշերում նրա կերպարի հմայքը երբեք չխուճացավ: Սկզբում կեցվածք ընդունած պահին՝ մտերմիկ մի բան էր ճառագում նրանից, կատարությունից փոփոխված վիճակում՝ զվարճալի էին հնչում նրա դիպուկ համեմատությունները, զանցառու աշակերտներին արհամարհող պահվածքի մեջ անգամ տեսանելի էր լինում նրա փխրուն հոգին...

1992թ. թռչակի անցնելու հիմնավորումով տնօրենի պաշտոնից ազատվելուց հետո էլ Արտաշես Գրիգորյանը որպէս ուսուցիչ շարունակում է իր համար ճակատագիր դարձած մանկավարժական գործունեությունը:

Տողերիս հեղինակը մի անգամ դիմել է նրան հետեւյալ հարցով, թէ ինչու նա իրեն չնվիրեց պատմագիտությանը: Լսվել էր հետեւյալ պատասխանը. «Գուցէ դաժան է հնչում, բայց գիտությամբ զբաղվող մարդ պիտի քիչ երեխաներ ունենա, կամ ընդհանրապէս չունենա, - մի քիչ մտորելուց հետո ավելացրել էր, - իսկ ես ամբողջ կյանքում շրջապատված եմ ռեյել ոչ միայն իմ (իր երկու ամուսնությունից նա ուներ երեք տղա ու երկու աղջիկ), այլեւ ծանոթ ու անծանոթ հազարավոր մարդկանց երեխաներով...»:

Արտաշես Աթայիչին հարգանքով պատկառանքով են ընդունել հասարակության բոլոր խավերը: Նրանից խորհուրդներ են հարցրել շատերը: Իսկ մտերիների միջավայրում պատմության այս կամ այն ժամանակահատվածին վերաբերող նրա անձանձիր խորհրդածությունները, որ մերթընդմերթ ընդհատվում էին պատմական ստոր անհատներին ուղղված ախորժալի հայիոյանքներով՝ լսել ու չժպտալ, անկարելի էր:

Բալզակյան կազմվածքի, սակայն անհամեմատ զեղեցիկ, հաճելիորեն խոշոր արտաքինով մի ինքնամաքավ տղամարդ էր նա, որ շրջապատի վրա բարեբան հսկայի առինքնող ներգործություն էր թողնում...

Վաթուկմեկ տարին չլրացած՝ 1995թ. ապրիլի 10-ին, նա հանկարծամահ է լինում՝ չհասցնելով իմանալ, թէ աշակերտներն ինչպէս են յուրացրել իր հանձնարարած դասերը...

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկական ու կեղծ

Մտորումներ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարության շուրջ

ՀՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, «Համո Սահյան ԳՄԿ» ՀԿ նախագահ

Համաշխարհային գրականության մեծերից մեկը (Մ.Գորկի) ասել է, թե իսկական բանաստեղծություն կարդալիս օրը տոն է դառնում, մյուս մեծն էլ (Ֆետ), երբ իսկական բանաստեղծություն էր կարդացել, ասել էր՝ այստեղ մարդ է այրվել:

Ինչու են Համո Սահյանի բանաստեղծությունները նվաճում մարդկանց սրտերը, որովհետև դրանք գրված են ինքնաբերական և հավակնունք են անեն օր մարդկանց համար տոն դառնալու:

Որ Համո Սահյանը ազգի սիրված բանաստեղծ է, մեկ անգամ ես համոզվում եմ նրա 100-ամյակի միջոցառումների անցկացման ընթացքում:

Այս տարի նորից փնտրված գիրք դարձավ նրա «Ինձ բացակա չեմ» ժողովածուն, որ հրատարակվեց չորրորդ անգամ: Հոբելյանական միջոցառումների մեջ առանձնացան Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի շենքում անցկացված երեկոն (ռեժիսոր Արամ Սուքիասյան), Արցախում կազմակերպված ասմունքողների մրցույթը (300 հոգու մասնակցությամբ) եւ եզրափակիչ երեկոն: Լավագույն հաղորդումներ հնչեցին հեռուստաէկրանից («Երկիր մեդիա», «Շողակաթ» եւ ուրիշներ), պետպատկերով լույս տեսան մեծ բանաստեղծի բառահատորյակի վերջին երեք գրքերը, նաեւ՝ «60 եւ մեկ հայրենի» փոքրածավալ պատկերազարդ: Ավարտվեց Լոր գյուղում բանաստեղծի տուն-թանգարանի վերակառուցումը: Հոբելյանական միջոցառումներ անցկացվեցին հանրապետության քաղաքներում եւ գյուղերում, ուսումնական հաստատություններում, նաեւ Սիսիան քաղաքում:

Համեմատաբար պասիվ դիրք ընդունեց հանրապետական մամուլը: Բացառություն էր միայն «Այոնյաց երկիր» պարբերականը, որի հոբելյանական համարն անմախաղեպ էր երեւոյթ պետք է համարել մեր ժամանակների մամուլի տարեգրությունում: Թերթը փորձել էր մեծ քննադատություններ կայացնել որպես բանաստեղծ-դասակազմ, որպես խորախորհուրդ մտածող եւ որպես խոշոր անհատականություն, եւ դա նրան հաջողվել էր: Այլ խնդիր է, երբ որոշ հոդվածների հեղինակները ձգտել էին ոչ թե Համո Սահյանին ներկայացնել, այլ թույլ էին տվել անճշտություններ, դեպքերի աղավաղումներ եւ այլն: Այդ, ինչպես նաեւ ՋԼՄ-ներում հրապարակված նույնանուն նյութերի մասին հնարավոր չէ խոսք չասել:

Մեծ բանաստեղծի գործունեության որեւէ բնագավառի մասին դատողություններ անելու համար պետք է լրջորեն խորհել, որովհետեւ մեծությունը զննահատելն այնքան էլ հեշտ աշխատանք չէ, նաեւ դրա համար վաստակած իրավունք պետք է ունենալ: Մի՞թե բանաստեղծի ժամանակակիցը լինելը կամ նրա հետ ունեցած մեկ-երկու հանդիպումներն իրավունք են տալիս ցանկացած ձեռով դատողություններ եւ եզրակացություններ կատարել: Եթե խոսք ունեն ասելու, թող այդ խոսքն ամենից առաջ վերաբերի նրա գործերին, այն երեւոյթին, թե ինչն է իրենց կապում Համո Սահյան ֆենոմենի հետ: Բանը հասել է նրան, որ իր հարազատները, ոչինչ չգտնելով, չէղած դեպքեր են հնարում, դառնում զավեշտապատումների հեղինակներ, հայտնվում ծիծաղաշարժ վիճակում: Մեկն էլ Համոյի եւ տողերիս հեղինակի լուսանկարն ուղարկել էր համացանց՝ գրելով, թե բանաստեղծի կողքին իր հայրն է: Երեսանի դպրոցներից մեկում էլ իմ լուսանկարը ներկայացվել էր որպես Համո Սահյանի երիտասարդ տարիների կարդ:

Այդ երեւոյթներին կարելու էր չտալով անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Համո Սահյանի 100-ամյակին ներկայանալու համար պետք էր լինել առնվազն երեք հարթության վրա:

ա) Ի՞նչ աջակցություն է բերվել մեծ բանաստեղծի ստեղծագործությունների տպագրությանը: 21-րդ դար գրքերի միջոցով է հնարավոր հասնել մեր գլխավոր նպատակին ամեն հայի հոգում մի Համո Սահյան ապրեցնելուն: Իսկ այդ գործում արդեն մեկ տասնամյակ է, որ իսկական ներդրում են կատարում Մաքսիմ Հակոբյանը (Քաջարան), Արմեն եւ Արամ Ստեփանյանները (մոսկվայաբնակ դարբասցիներ), Դուկաս Բուրիսյանը («Չանախ») ՄՊԸ-ի տնօրեն), Սուրեն Խաչատրյանը (Սյունիքի նախկին մարզպետ), Արմեն Դարբինյանը (Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ռեկտոր) եւ էլի շատերը:

Բանաստեղծի մահվանից հետո նրանց աջակցությամբ տպագրվել են մի քանի տասնյակ ժողովածուներ, մենագրություններ, պատկերազարդեր, օրացույցներ եւ այլն: բ) Ի՞նչ աշխատանք է տարվել մեծ բանաստեղծի ստեղծագործությունների գիտական արժեւորման բնագավառում: Այսինքն ինչ քայլերով է առաջ գնում սահյանագիտությունը:

Վերջին տարիներին պաշտպանվել է երեք թեկնածուական եւ մեկ դոկտորական թեզ: Ուշագրավ մենագրություն է դրել ընթերցողի սեղանին գիտությունների դոկտոր Դավիթ Գասպարյանը: Տպագրվել են «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը», «Համո Սահյան, գրողի, խոսքի, խղճի կշիռը» ժողովածուները, նախադեպը չունեցող «Համո Սահյան» հանրագիտարանը, լույս են տեսել 100-ից ավելի գիտական հոդվածներ, ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ ՌԴ-ում եւ Սփյուռքում: Գրական անդաստանում Համո Սահյանին ներկայացնելու ասպարեզում մեծ վաստակ են ներդրել գրականագետ, «Նորք» հանդեսի գլխավոր խմբագիր Ֆելիքս Մելոյանը եւ արձակագիր Ռուբեն Հովսեփյանը: Խորախորհուրդ գրականագիտական հրապարակումների հեղինակ է Համո Սահյանի գրական վաստակի ամենաազնիվ գնահատող, նրա քննադատության մեկնաբան, գիտությունների դոկտոր Կիմ Աղաբեկյանը:

գ) Ի՞նչ է արվել մեծ բանաստեղծի հիշատակի հավերժացման ասպարեզում:

Սահմանվել են «Համո Սահյան» ոսկե հուշամեդալ եւ «Համո Սահյան-100» հոբելյանական ոսկե մեդալ, որոնցով պարգևատրվում են վերոհիշյալ երկու բնագավառում վաստակ ունեցած անհատները:



Սիսիանում 2004թ. կանգնեցվել է բանաստեղծի հուշարձանը, Երեսանի Կասյան 3 շենքի եւ Սիսիանի առանձնատան պատերին փակցվել են հուշատախտակներ (քանդակագործներ՝ Գետիկ Բաղդասարյան, Արա Շիրազ): Նկարահանվել են հեռուստաֆիլմեր (ռեժիսորներ՝ Ջուլիետ Կաժոյան, Նաիրա Խաչատրյան): Մինչեւ տարեվերջ պատրաստ կլինի եւս մի քանի ֆիլմ: Կծեւավորվի Լոր գյուղի տուն-թանգարանը: Աշխատանքներ են տարվում Երեսան քաղաքում մեծ քննադատի հուշարձանի կանգնեցման ուղղությամբ:

Մնացածը, անկեղծ ասած, անիմաստ մարզանքներ են: Ինչպե՞ս բացատրել, օրինակ, որ Սիսիանի մշակույթի տանը կազմակերպված միջոցառումներ Երեսանից իրենց մասնակցությունն էին բերել մի քանի տասնյակ հոգի, սակայն ընդամենը չորս օր հետո Կոմիտասի այգու պանթեոնում անցկացված հոգեհանգստյան արարողությանը նրանցից մասնակցում էր 4-5 մարդ: 450կմ կտրել էին, սակայն զլացել էին պանթեոն գալ, երեւի նրա համար, որ այնտեղ միամիտ ունկնդիրներով շրջապատված ամբիոն են ճաշկերույթի սեղաններ չկային:

Մի հետաքրքիր դեպքի մանրամասն: «Վիվա-Սել ՄՏՄ»-ի տնօրեն Ռալֆ Յիրիկյանին դիմել էինք աջակցելու Համո Սահյանի 100-ամյակի հետ կապված որեւէ ծրագրի: Կարելու էր այն չէ, թե մեր խնդրանքը պիտի ընթացք ստանար կամ մերժվեր, կարելու էր այն, որ ամեն օր հեռուստաէկրանին երևալու մոլուցեցով տարված այդ կիսահայն աղավաղել էր մեծ բանաստեղծի անուն-ազգանունը: Մի անգամ մեկը պիտի նրան բացատրի, թե այդ գումարները, որոնք երբեմն բարեգործության անվան տակ ծախսվում են, որտեղից, ում փողերից է գոյանում: Հո՞ղ են մշակում, մթերքներ են արտադրում, այգիներ են տնկում, շենքեր են կառուցում: Ժողովրդից առնում ու բարերար են ձեւանում: Համո Սահյանը ժամանակին մասնակցել է, եւ փառք Աստծո, որ մնացած հարցերով զբաղվող կազմակերպություն եւ համապատասխան անհատներ կան: Լավբնտ Սարգսյանը, ով ժամանակին նորոգել է բանաստեղծի պապեմական տունը,

Սիսիանում հուշարձան կանգնեցրել, Վաղատնի Թիրանի այգու տնակ է կառուցել բանաստեղծի համար, հի մա էլ վերանորոգել է այդ տնակը, երկրորդ հարկը թանգարան դարձրել, իսկայական այգին թարմացրել, տեղն էլ կոչել «Սահյանաձոր»: Մշտապես հյուրեր է ընդունում, ծանոթացնում թանգարանի նյութերին:

Ի դեպ, Լոր գյուղի թանգարանի մասին: Զգիտես ինչու, լորեցիներին թվում է, թե այնտեղ պիտի հավաքել ինչ-որ մեծերի հնույթներ, կուժկուլա, չուխա-տրեխ, խալի-կարպետ եւ զավառական մտածողության արգասիք այլ պարագաներ: Մինչդեռ այն պետք է համապատասխանի 21-րդ դարի թանգարանային մակարդակներին: Այսինքն ցուցադրական նյութեր Համո Սահյանի կյանքի ու գրական գործունեության մասին, տեսադրամներ, համակարգչային մեծ հագեցվածություն ունեցող տեսաձայնադրամներ, ձեռագրերի պահոց, լուսանկարների հավաքածու, արվեստի գործեր (դիմանկար, քանդակ եւ այլն): Այցելուն պետք է թանգարանից դուրս գա լիովին տեղեկացված մեծ քննադատի ֆենոմենի մասին: Պետք է փակել նաեւ մի քանի պոռտախոսների բերանը, ովքեր գյուղ եկած այցելուներին, հենց այնպես, իբրեւ թե իմիջիպալոց, ասում են, թե բանաստեղծն իրենց գյուղի համար քիչ բան է արել: Իհարկե, նրանք այդ ասելով չեն մտածում, թե Լորում մետրո, օպերայի թատրոն, օդանավակայան, մարզադաշտ պիտի կառուցեին, ուղղակի ըստ նրանց՝ Լորում պիտի այնպիսի պայմաններ ստեղծվեին, որ իրենք ոչինչ չանեին, բայց լիության մեջ ապրեին, քանի որ այնտեղ մեծ բանաստեղծ է ծնվել: Մինչդեռ պետք է աչքները բացեն եւ տեսնեն, որ ընդամենը 350 բնակիչ ունեցող գյուղը շրջկենտրոնի հետ կապող 30կմ ճանապարհ ունի, երկհարկանի դպրոց (որ վերջերս 65 միլիոն դրամով կապիտալ վերանորոգվել է), ակունք, անասնապահական համալիր եւ այլն: Ժամանակին Սիսիանի 36 բնակավայրից ամենաքիչ գյուղատնտեսական մթերքներ արտադրող Լորը մշտապես ուշադրության կենտրոնում է եղել: Խորհրդային վերջին տարիներին հենց Համո Սահյանի միջամտությամբ զիջեցինք պետությունից վերցված ժամկետացված վարկերը (մոտ կես միլիոն ռուբլի):

Մեծ բանաստեղծ Համո Սահյանը, որ կանխագուշակման աստվածային շնորհով էր օժտված, ապագայի շատ երեւոյթների ճշգրիտ գնահատականներ է տվել, մասնավորապես իր արվեստի մասին խոսք ասելու փորձերն անողներին պատվիրել է. *Նող ու ջուր չեմ ուզում ձեզից, Երեսան հողով մի քովեք, Երեսան մի քովեք շուկա, Ծաղիկս փողով մի քովեք: Մոլեխս բաշեք ձեզ վրա, Նարեգեք, հով անեմ շոգին, Մոլեխս բաշեք մեկ-մեկ, Տիկոլիս ողորմի քովեք:*

Վերջապես, ինչ նպատակով են անցկացվում մեծերի հոբելյանները: Նրանց վաստակի արժեւորման, վերագնահատման, նրանց մեծությունն ընդգծելու ահագնացմամբ, եւ քանի որ սահյանական տարին չի ավարտվել, պետք է շարունակենք իրականացնել այն ծրագրերը, որոնք նշված էին վերոհիշյալ երեք կետում: 21-րդ դարի համայն անմահ ստեղծագործություններում կարող ենք գտնել հային ու Հայաստանին, ծնողներին, մեր բնաշխարհին նվիրված սքանչելի երգեր, փնտրենք արցունքով լվացված սերեր, ստանանք մեզ հուզող հարցերի պատասխաններ, սքանչանանք նրա անկրկնելի հայրեններով ու հացաբույր գործերով եւ մշտապես ականջի օղ ունենանք նրա պատվիրանը. «Ինձ երգիս մեջ փնտրեք միայն, ես ուրիշ տեղ չկամ»:

Քննարկվեց Ողջու գեղարվազանային կառավարման պլանի մշակման նախագիծը

Հուլիսի 31-ին Կապանում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) «Մաքուր էներգիա եւ ջուր» ծրագրի (ՄԷՃԾ) մասնագետները Ողջու գետավազանային կառավարման պլանի մշակման նպատակով շահագրգիռ կողմերին ներկայացրին գետավազանում առկա բնական եւ մարդածին ազդեցությունների վերլուծության արդյունքները: Քննարկմանը մասնակցեցին ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության, Հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի, ինչպես նաեւ մարզպետարանի, համայնքների, տեղական հի-ների ներկայացուցիչներ:

Վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ բազմաթիվ մարդածին ճնշումները եւ հատկապես հանքարդյունաբերական գործունեությունը, կեղտաջրերի հեռացումը բացասաբար են ազդում շրջակա միջավայրի վրա՝ նպաստելով ջրի եւ հողի աղտոտմանը, կենսաբազմազանության կորստին եւ բնական պաշարների սպառմանը: Հատկապես կարելու է նկատել փոփոխության եւ մարդկային գործունեության արդյունքում առաջացած հետեւանքների գիտակցումը՝ բնապահպանական եւ սոցիալ-տնտեսական մարտահրավերների հաղթահարման եւ ապագայում դրանց բացասական ազդեցությունների կանխմանը կամ մեղմացմանը ուղղված համապատասխան միջոցառումների պլանավորման համար:

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները գետավազանային պլանավորման գործընթացի կարեւոր մասն են կազմում, որտեղ բոլոր շահառուներին (պետական կառույցներին, մարզային եւ համայնքային կառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին եւ շահագրգիռ քաղաքացիներին) հնարավորություն է տրվում ներկայացնել իրենց կարծիքներն ու առաջարկությունները ՄԷՃԾ-ի մասնագետներին՝ կանխելու հնարավոր բացթողումները եւ վրիպակները: Շահառուների կարծիքները հաշվի կառնվեն Ողջու գետավազանային կառավարման պլանի միջազգային վերջնական տարբերակի պատրաստման ընթացքում, որն ավարտելուց հետո (մինչեւ 2014թ. հոկտեմբեր) այն պետք է ներկայացվի ՀՀ կառավարություն: Խորհրդակցության ընթացքում եւս մեկ անգամ պարզ դարձավ, որ Ողջու գետավազանի տարածքում ջրային ռեսուրսների որակի եւ քանակի վրա զգալի բացասական ազդեցություն են թողնում «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, «Դանդի փրիշա մեթալս» ՓԲԸ-ն, «Լեռ-Էքս» ՄՊԸ-ն: Դրանք բացասական հետեւանքները կանխելու համար պետք է կատարվեն լուրջ քայլեր, ինչին էլ միտված է «Մաքուր էներգիա եւ ջուր» ծրագիրը, այն է՝ Հայաստանում ջրային եւ էներգետիկ ռեսուրսների կառավարման փորձի եւ բարելավման, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության մեղմացման ուղղված միջոցառումների իրականացում:



ՏԻԳՐԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ. «Մեղրեցին մեծ հարգանք է փաճում զինվորի հանդեպ, սիրում սահմանապահ ջոկատը, ջոկատն էլ ժողովրդին է սիրում»

ՍԿԻՉԲԸ ԷՏ 6

մի պահ հանգստանալու նպատակով որոշ ժամանակով եկա Մեղրի, ու այնպես ստացվեց, որ շփվելով այդ զորամասի հրամանատարության հետ՝ չհրաժարվեցի ծառայության անցնելու առաջարկից: Թեպետ պետք է նշեմ, որ եթե Մեղրու սահմանապահ ջոկատում չստացվեք, հայկական զորամասում ծառայության կանցնել: Իմ որոշումը պայմանավորված էր այդ օրերի իրավիճակով՝ հայ-ադրբեջանական լարված հարաբերություններից բխող, երբ ազգովի թե՛ նյութապես, թե՛ հոգեպես աջակցում էինք պատերազմի մասնակիցներին, վիրավորներին: Ծառայության տարիներին դրսևորելով բարձր պատասխանատվություն եմ նվիրվածություն՝ աստիճանաբար գտա իմ արժանի տեղը Մեղրու սահմանապահ ջոկատում:

– **Տարիքի՞ պատճառով եք թողնում ծառայությունը:**

– Ուսանական բանակում ծառայությունն ունի իր հստակ սահմանափակումները՝ օրենքով կարգավորված: Ես արդեն 46 տարեկան եմ եւ անցնում եմ թոշակի՝ տեղափոխվելով Ռուսաստանի Դաշնություն:

– **Թույլ տվեք նշել՝ մեր տպավորությունն այնպիսին է, որ ռուսական զորամասն առանց Ձեզ դժվար է պատկերացնել, մանավանդ զորամասի մշակութային կյանքը, որովհետեւ Դուք իսկապես մեծ ներդրում ունեք նախորդ տասնամյակներում ձեւավորված ավանդույթների պահպանման, նոր ավանդույթների ստեղծման եւ մի շարք նախաձեռնությունների իրականացման գործում:**

– Տարիների ընթացքում բազում աշխատանքներ են կատարվել զորամասում: Ի սկզբանե էլ իմ

աշխատելու ճիշդ եղել է զինվորի եւ սպայի մեջ ամենից առաջ մարդկային հատկանիշներ տեսնելը, վերադասի հրամանների պատշաճ կատարումն ու ենթակներին հարգելը: Բացի դրանից՝ մեծ աշխատանքներ ենք տարել, որպեսզի պահպանենք հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ դարերով ձեւավորված բարեկամությունը: Հետխորհրդային տարիները, հիրավի, մեր ժողովրդի համար ինչ-որ չափով անորոշության ժամանակներ էին: Բայց, փառք Աստծո, բարձրագույն ղեկավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները հստակեցրին, որ ռուսական զորամասի ներկայությունն այս տարածաշրջանում կայունության երաշխիքներից մեկն է: 1941թ. օգոստոսի 25-ին Կապուտեղուի խորհրատարներում՝ Քաջարան քաղաքից 20 կմ հեռավորության վրա, Իրանից վերադարձող խորհրդային ինքնաթիռի վթարից զոհվել են ավագ լեյտենանտ Կոնստանտին Սոկոլովը (Դրիմի Թեոդոսիա քաղաքից), լեյտենանտ Վադիմ Խասանովը (Չեյաբինսկի մարզի Չլատոուստ քաղաքից): Կապանի զինկոն Լեոնիդ Գրիգորյանի, Գալինա Բորիսովնա Աղախանյանի, Քաջարանի այն տարիների քաղաքապետ ժորա Յովսեփյանի հետ Քաջարանում համատեղ տեղադրեցինք զոհված օդաչուների հուշաքարերը: 1996-97թթ. զորամասը մի քանի անգամ համերգներով հանդես եկավ Քաջարանի բնակչության առջեւ՝ ժողովրդի անորոշությունը ցրելու եւ դրական լիցքեր հաղորդելու համար: Մեր առջեւ կարելու խնդիր էր ծառայած. Խորհրդային Միության փլուզումից հետո կայունացնել հայ-ռուսական հարաբերությունները: Եվ տարեց-տարի այդ առումով առաջընթաց

զրանցեցինք ու հասանք նրան, որ բոլորն էլ հասկացան միայնակ ոչնչի չեն կարող հասնել: Գտնվելով բարդ աշխարհագրական տարածքում՝ ռուսական զորամասի առկայությունն ուղղակի անհրաժեշտություն էր Մյուսինքում: Այդպես է նաեւ այսօր:

– **Բազմիցս մասնակցելով ուշախոթյալ միջոցառումների՝ ընթացքում Գրիգորյանի, Քալինա Բորիսովնայի մասնակցությունը, որ դրանք բազմաբնույթ են, եւ, կարելի է ասել, Ձեզ հաջողվել է զորամասի մշակութային կյանքը հասցնել միանգամայն նոր մակարդակի:**

– Առհասարակ յուրաքանչյուր զորամասում անհրաժեշտություն է որոշ ժամանակով կտրվել զուտ զինվորական առօրյայից, մարդու հոգեբանության մեջ պարբերաբար փոփոխություն մտցնել՝ մեծ նշանակություն տալով գեղագիտական դաստիարակությանը: Ես ուրախ եմ, որ Մեղրու տեղական իշխանությունների հետ միասին կարողացանք վերականգնել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին համապատասխան ուշադրություն դարձնելու ավանդույթը, որ Խորհրդային Միության փլուզումից հետո համարյա տասը տարի մոռացվել էր: Սա հոգեբանական մեծ հարված էր նրանց համար: Մեզ հաջողվեց նոր կյանք տալ այդ ավանդույթին, քանի որ պատմությունը մոռանալ չէր կարելի. յուրաքանչյուր ազգ ուժեղ է նախելառաջ իր հիշողությամբ, մոռանալով ոչնչի չեն կարող հասնել: Մշակույթն էլ պատմության մի մասնիկն է, եւ այն պահպանելն անհրաժեշտություն է: Ու մնալ շատ նախաձեռնություններ ու գործեր:

– **Չորամասի անձնակազմի հետ ամեն անգամ շփվելով՝ այն համոզմանն ենք հանգել, որ գործ ունենք զինվորական համերաշխ,**

միասնական ընտանիքի հետ, որտեղ զորամասի բազմազգ լինելը ոչ թե խնդիր է, այլ՝ արժանիք:

– Մենք բոլորս զինվորներ ենք եւ ծառայության ընթացքում կարող ենք հայտնվել շատ դժվարին իրավիճակներում: Ձինվորների ներքին համերաշխությունը հաջողության գրավականներից մեկն է: Երբ Արցախյան պատերազմի տարիներին ծառայում էի զորամասում, այստեղ տարբեր ազգերի ներկայացուցիչներ կային: Ինձ բախտ վիճակվեց տեսնել այն, ինչ ի սկզբանե՝ 1926 թվականից, դրվել էր զորամասի արժեքային համակարգի հիմքում՝ ինտերնացիոնալիզմ, ժողովուրդների բարեկամություն: Աշխատանքի անցնելուց հետո առաջին քայլս տարիներով ստեղծված այդ ավանդույթների վերականգնումն էր: Շնորհակալ եմ այն մարդկանց, ովքեր ինձ օգնեցին: Շնորհակալ եմ իմ բոլոր հրամանատարներին, իսկ ես ծառայել եմ միմյանց հաջորդած ութ հրամանատարի ղեկավարությամբ: Նրանք ոչ միայն պաշտպանում էին յուրաքանչյուր նախաձեռնություն, այլեւ ձգտում դրան ինչ-որ բան ավելացնել: Ազգային խտրականություն երբեք չի եղել մեզ մոտ, տարիները ցույց են տալիս, որ կարելի է ու անհրաժեշտ նոր ժամանակները կառուցել առանց ժողովուրդների՝ միմյանց հանդեպ ատելության: Համերաշխությունը նպաստեց կոլեկտիվի ձեւավորմանն ու ամրապնդմանը:

– **Այն կապը, որ կա Մեղրու սահմանապահ ջոկատի ու Մեղրի քաղաքային համայնքի, մերձակա գյուղերի միջեւ, միայն դրվատանքն է ընդօրինակման է արժանի: Կարծես թե իրար լրացնում էիք. ռուսական զորամասը դարձել է տարածաշրջանի պարտադիր բաղադրիչը:**

– Այդ համագործակցությունն անհրաժեշտ է: Ո՛ւմ է պետք զինվորն առանց ժողովրդի կամ ժողովուրդն առանց զինվորի իրավիճակը: Մեր զորամասի դարպասները բաց են բոլորի համար, բաց դռների օր ունենք, զորամաս են այցելում դպրոցականները, Մեղրու բնակիչները: Բոլոր տոնակատարություններին մասնակցել ենք, եւ արդիական են հետեւյալ խոսքերը՝ ասված խորհրդային ժամանակներում. «Սահմանը պահում է ողջ ժողովուրդը»: Ժողովրդի հետ միասնաբար ավելի հեշտ է կատարել այն առաջադրանքները, որոնք տալիս է բարձր հրամանատարությունը: Առանց մեղրեցու դա հնարավոր չէ: Ի դեպ, մեղրեցին շատ հյուրասեր է, մեծ հարգանք է տածում զինվորի հանդեպ, սիրում սահմանապահ ջոկատը, ջոկատն էլ սիրում է ժողովուրդին:

– **Ուրիշ ի՞նչ տպավորություններով եք հեռանում զորամասից:**

– Հեռանում եմ բարձր տրամադրությամբ՝ 22 տարվա ընթացքում դաստիարակել եմ հազարավոր զինվորների, ովքեր ինձ հիշում ու գնահատում են: Մի քիչ էլ տխուր եմ, որովհետեւ բաժանվում եմ իմ սիրելի զորամասից, իմ հոյակապ ընկերներից: Աստծուն շնորհակալ եմ, որ հնարավորություն տվեց ծանոթանալ տարբեր ազգերի ներկայացուցիչների, շատ մարդկանց հետ, ունենալ հիանալի հրամանատարներ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցելիս ձեռք են բերել շատ բարեկամներ եւ հեռանում եմ հաճելի հիշողություններով: Բայց այն, ինչ ունի սկիզբ, ունի նաեւ վերջ, սա իմ սիրելի զորամասն է, եթե բախտ վիճակվի, նորից կվերադառնամ: Համոզված եմ ամեն ինչ կշարունակվի: Ծառայությունս թողնում եմ զլուխս բարձր, ինչպես վայել է յուրաքանչյուր սպայի:

– **Բարի ճանապարհ եւ նորանոր հաջողություններ:**

– Շնորհակալ եմ:

Հարցազրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Մարզկենտրոնում նոր աղանդ, թե՛ վերադարձ փոփոխ պաշտամունքին

Ըստ Ռիտա Դավթյան տեղական գործչի՝ մեր աստվածը Հակոբյանների ընտանիքն է

Ռեզյումե

2013թ. դեկտեմբերի 3-ին Կապանում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը հայոց մեջ, կարելի է ասել, անմասնադեպ էր վերջին 1700 տարվա կտրվածքով:

Այդ օրը Կապանի N3 հատուկ կրթահամալիրի տնօրենն էր գիտություն հաշմանդան երեխաների հայտարարեց՝ «Հակոբյան ընտանիքը մեր աստվածն է»:

Ճիշտն ասած դարեր շարունակ Աստծո եւ հավատի այլ ընկալում ենք ունեցել: Հայր Աստված եւ Որդի Աստված՝ Քրիստոս, ու Սուրբ Հոգի: Հիմա, պարզվում է, որ այնքան էլ այդպես չէ:

Առհասարակ վերջերս քրիստոնեական արժեքները Մյուսինքում եւ մասնավորապես մարզկենտրոնում կասկածի են ենթարկվում: Նախ՝ շարիաթի օրենքով ինչ-որ ձեռնարկություն ենք բացում՝ հրաժարվելով քրիստոնեական կարգից: Հիմա էլ աստված ենք հռչակում Հակոբյան ընտանիքին:

Մեծ իմաստով կարելի է եւ ուշադրություն չդարձնել կատարվածին: Ի վերջո մեր հեռավոր նախնիներն էլ (մի քանի այլ ժողովուրդների նախնիներ եւս)՝ գտնվելով զարգացման ցածր աստիճանի վրա, պաշտում էին ցեղի նախահորն ու հովանավոր համարվող մեկին կամ պաշտամունքի առարկա դարձնում իրենց սիրելի կենդանուն կամ բույսին: Եվ արտառոց չի կարելի համարել, որ այդ հավատալիքների մնացուկները պահպանվել են մեզանում, իսկ դրանց կրողներն ապրում են մեր կողքին, թեւ հազարավոր տարիներ են անցել այն ժամանակներից: Այնպես որ դեկտեմբերի 3-ին կատարվածը կարելի է դիտարկել այդ տեսանկյունից: Կարելի է ենթադրել նաեւ, որ կատարվածն արագափոխության սովորական դրսևորումն է. հիմա մեզանում այնքան շատ են շեղումները Քրիստոսի ուսմունքից:

Եվ այդ ամենին, իսկապես, կարելի է ուշադրություն չդարձնել ամենեւին, մանավանդ որ մեր սահմանադրությունն էլ հռչակել է խղճի ու դավանանքի ազատություն: Այսինքն՝ Ռիտա Դավթյանն իրավունք ունի Հակոբյաններին հռչակել իր աստված, իրենց տան պատից կախել Հակոբյանների տոհմաճառը, նրանցից շատերի մեծադիր նկարները: Կարող է նույնիսկ այդ նկարների տակ ամեն օր մոմ վառել, բայց...

Ռիտա Դավթյանը Հակոբյաններին աստված է հռչակում 1700 տարի առաջ քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրի պետական կրթօջախում: Ավելին՝ խոսքը ինչեց-վում է ճակատագրի կամոք դժբախտացած երեխաների միջավայրում, որոնց, փաստորեն, այդ բարոյավոր կրկնակի դժբախտության ենք մղում, պետության հանդեպ անվստահություն սերմանում:

Ռիտա Դավթյանը նախկինում էլ աչքի է ընկել «իշխա-

Նա չփորձվեց ու չաղարկվեց, չփոխեց իր հավատամքը

Ինձ համար դյուրին չէ ստել, արձանագրել, որ այլևս չկա Յուրի Ալեքսանյանը, որ նա վախճանվել է ու հեռացել մեզանից. ինքն իմ քաղաքի երեւելի մրավորականներից էր, Գորիսի լավագույն մանկավարժներից, իմ ընկերն ու հարեւանն էր. «Սյունյաց երկրի» բարեկամը, մեր եզերքի մարդկանց նկարագիրն իր մեջ ամփոփողներից մեկը:

Մահը վրա հասավ հանկարծակի, թեև մեկ տարի առաջ հիմնովին ճաք էր տվել նրա առողջությունը ու մասամբ վերականգնվել: Օգոստոսի 24-ի վաղ առավոտյան կորցրեց գիտակցությունը, տեղափոխվեց երեւան, բայց երկու օր անց նրա կյանքի երկարաձգումն այլևս անհնարին դարձավ:

Յուրի Ալեքսանյանն էլ մարդու այն տեսակն էր, ով կյանքի ընթացքում ու բուռն գործունեության օրերում երբեք տուրք չտվեց իր մասին խոսք ասելուն եւ իր կատարածի հրապարակային գնահատմանը: Մեր այդ արժանավորին չէին նկատել նաեւ նրանք, ովքեր կարող էին կամ պարտավոր էին անել դա, չնայած մեր շփոթ երթում միշտ չէ, որ արժանավորին կարողանում ենք տեսնել, գնահատել: Եվ Յուրի Ալեքսանյանի մասին խոսք ենք ասում միայն հիմա, երբ ինքն այլևս չկա:

Իր կյանքը մղվել էր բոլոր գիտություններից ու զբաղմունքներից ամենախստակացին ու ամենազգայինին՝ մեր երեխաների կրթության եւ դաստիարակության գործին: Դեռ տարիներ առաջ, երբ Կապանի շրջանի Դավիթբեկ գյուղում սկսեց մանկավարժական գործունեությունը, հասավ սրբազան այն

պատվանդանին, որ իսկական ուսուցչի պատվանդանն է:

Իր փառքն ու անմահությունն էլ գտավ այդ ասպարեզում: Նրա կրթած ու դաստիարակած դպրոցականներն ու ուսանողները կան եւ տարիներ շարունակ դեռ լինելու են մեր կյանքի ամենաթեթեւ կետերում: Հանրության մեջ լինելիս, փողոցում քայլելիս կամ գյուղեր այցելելիս նրան այնքան մարդիկ էին մոտենում: Երեկվա իր աշակերտներն էին, երեկվա ու այսօրվա ուսանողները, ովքեր սիրելի ուսուցիչ կամ դասախոս ընկեր Ալեքսանյանի որպիսությունն էին հարցնում...

Մասնագիտությամբ պատմաբան էր, ավարտել էր Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Իր սիրած մասնագիտության իմացության մեջ մեզանից քչերը կհամենատվեին նրա հետ: Եվ այդ իմացությունը 1971 թվականից սիրով ու նվիրումով ծառայեցնում էր հանրակրթական դպրոցի աշակերտներին, 2000 թվականից՝ նաեւ Գորիսի ինստիտուտի, ապա՝ պետական համալսարանի ուսանողներին:

Ժամանակների ու հասարակարգերի ջրբաժանում չփոխվեց ու չաղարկվեց, չփոխեց իր հավատամքը, ոչ ինչ-որ տվյալներն ունեցավ, ոչ էլ հրապուրվեց նոր ժամանակների գայթակղիչ խայծերով: Նա խնդիր չունեցրեց ամառը լինելու, մարդկանց ոտքի հանելու եւ իր հետեւից տանելու: Նա կարիք չունեցրեց իշխանամեծ հարթակներում ցուցանելու իր գիտելիքները, կազմակերպչական կարողությունները, առողջ աշխարհայեցողությունը: Գործի մարդ էր եւ իր բաժին բեռը հանդարտ ու անաղմուկ կրելով՝ մասնակցում



եր մեր հասարակության ընթացքին: Եվ կարծում էր, որ քաղաքացի լինելու պայմանը հենց դա է՝ իր գործն իր կարելիությունների չափով կատարելը: Այդպես էլ ապրում էր, այդպես էլ սիրում էր իր հողն ու ջուրը:

Նրա մեջ յուրատեսակ մի խաղաղություն, մի ներդաշնակություն էին ծովացել: Բայց այդ վիճակը, կարծեք, թվացյալ էր: Նա, ի տարբերություն շատերիս, ներամփոփ էր եւ մեր օրերի հարուցած դժվարություններն ու դրանցից բխող ստածուններն իր մեջ կրում էր յուրովի ու իր բաժին լուծը քաշում...

Իրեն չէր պարտադրում երբեք, բարձր չէր խոսում, ձեռքը սեղանին չէր խփում, կանոնին չէր հակադրվում անգամ այն ժամանակ, երբ հանդիպել կերպով, օրինակ,

ազատվում էր Գորիսի N2 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնից, երբ դասաժամի համար Գորիսի պետական համալսարանում գործընկերներն իրար էին խառնվում:

Մեր ընկերության ու բարեկամության մեջ, հասարակական հրապարակում, հանդիպումներում սպասված մարդ էր: Նրան սպասում էինք գորիսյան մեր բոլոր հանդիպումներում: Եվ նրա անժամանակ կորուստը կորուստ է ոչ միայն իր ընտանիքի անդամների, մերձավորների, այլև Գորիս քաղաքի հասարակության համար:

Դեռ ճամփա ուներ գնալու Յուրի Ալեքսանյանը, անկատար ծրագրեր, կիսատ գործեր ու երազանքներ ուներ, բայց թողեց ու հեռացավ: Գնաց ու մեզ վիշտ պատճառեց: Ափսոս...

66-ամյա Յուրի Ալեքսանյանը հողին հանձնվեց Հին Գորիսի գերեզմանատանը, որտեղ ննջում են իր ծնողները: Հուղարկավորվեց տարվա՝ իր համար ամենակարեւոր ու նշանավոր օրվա՝ սեպտեմբերի 1-ի շնորհիվ, չնայած մի քանի օր առաջ մեզ հետ քննարկում էր նոր ուսումնական տարվան առնչվող հարցեր, մտմտում ծրագրեր:

Իսկ կյանքը շարունակվում է եւ շարունակվելու է: Ինչպես Սյունյաց աշխարհի մեծ բանաստեղծն է ասում՝ «Օրերն այս անցյալ են դառնալու./ Դեռավոր, հեռավոր անցյալ.../ Գալու են տարիներ դարձյալ./ Եվ դարձյալ գլխիդ վրայով/ Կռունկը՝ զարնանը հյուսիս./ Աշունը հարավ է գնալու...»: Եվ շարունակվող կյանքում՝ այս պարագայում, գլխավորը Յուրայի ընտանիքի արժանապատիվ հարատւման ապահովումն է լինելու, ինչը եւ նրա հիշատակի հավերժացում կնշանակել: Ահա թե ինչու նրա տիկնոջը, երեք զավակին եւ հինգ թոռանը համբերություն ցանկանալու հետ մեկտեղ տոկունություն են մաղթում, ծանր վիշտն արժանապատվորեն կրելու ուժ են իմաստնություն:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
29 օգոստոսի 2014թ.**

Մեղրու փարածաշրջանին՝ նոր էկոլոգիական վրանգ

Հայ-ռուսական համատեղ ծեցարկություն «ԱՏ-Մետալս» ՍՊԸ-ն ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել Մեղրասարի ոսկու հանքավայրի բաց եղանակով շահագործման նախագիծը:

Մեղրասարի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Մեղրու լեռնաշղթայի լեռնանցքային մասում, Մեղրի գետի վերին հոսանքի ավազանում, Լիճք եւ Տաշտուն գյուղերից 5 կմ դեպի հյուսիս-արեւելք:

Նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել 3 բացահանքերով հաջորդաբար: Հանքավայրի ընդհանուր պաշարներն են՝ հանքաքար՝ 345,392 հազար տ, ոսկի՝ 1602,19 կգ, արծաթ՝ 4496,52 կգ: Տարեկան արդյունահանվելու է 50,0 հազար տոննա ապարնային հանքաքար: Հանքավայրի շահագործման ընդհանուր տեղությունը կազմելու է 7,5 տարի: Հանքավայրում հանդիպում են նաեւ այլ հազվագյուտ մետաղներ: «Հանքաքարերի միներալային կազմում մասնակցում են պիրիտը (գերանյունում է), խալկոպիրիտը, գալենիտը, սֆալերիտը, խունացած հանքաքարերը, արսենոպիրիտը, մելանտերիտը, բնածին ոսկին, բնածին արծաթը, ինչպես նաեւ հեմատիտը: Պարփակող ապար է հանդիսանում քվարց-կարբոնատային մետատմադիտը: Քվարցը բնականակա հարաբերությանը կազմում է 50-60%-ը: Հանքային միներալները կազմում են 1.0-2.0%, որոնցից պիրիտի բաժինը 1.0-1.5%», – նշված է նախագծում: Սակայն հանքաքարից սրանց կործան մասին խոսք չկա: Դրանք կմնան լցակույտերում:

Հանքավայրի շահագործման ընդհանուր մակերեսը կազմում է 73 հա: Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 33,5 հա: Բացահանքերի շահագործման 7.5 տարվա ընթացքում մակաբացման ապարների ծավալը կկազմի 24.69 մլն մ3:

Հանքաքարը կվերամշակվի Տաշտունի փորձարարական գործարանում, որը գտնվում է նախագծով բացահանքերի տարածքից մոտ 9-10 կմ հեռավորության վրա: Նախագծի համաձայն՝ Տաշտունի փորձարարական համալիրը տեղադրվելու է բարձր լեռնային շրջանում, որտեղ հանդիպում են հազվադեպ եւ անհետացող, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ:

Տարածաշրջանում շատ կան Հայաստանի Կարմիր գրքում գրանցված 29-ը թռչնատեսակ, 15 կաթնասուն, միջատների 1 տեսակ: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ կետով արգելվում է ընդերքուգտագործումը, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերի կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաեւ եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

Հիշեցնենք, որ Տաշտունի փորձարարական համալիրի շինարարական աշխատանքները սկսվեցին առանց բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության, ինչի համար բնապահպանական տեսչությունը դադարեցրեց համալիրի շինարարական աշխատանքները ՇՈՒՐՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ էՋ 12

«Նամետության» անբնական ու հեքիաթային դրսեւորումներով: Օրինակ, 2012թ. Աժ ընտրությունների նախօրեին, մարզի ղեկավարների եւ համրապետականների հանդիսույթի ժամանակ, ի լուր ամենքի հայտարարեց՝ «Ով վահեին ծայն չտա՝ նրա մայրիկը...»: Հավաքվածները չէին հավատում իրենց ակազցներին, Մաքսիմ Հակոբյանը հրճվածքի մեջ էր... Տարիներ առաջ էլ, երբ «Սյունյաց երկրի» եւ Սյունիքի մարզպետարանի հարաբերություններում անախորժ վիճակ էր, Ռիտան մի քանի հոգու հետ նախաձեռնեց ստորագրահավաք՝ ընդդեմ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրի՝ օրվա աստծուն հաճոյանալու ակնկալիքով:

Եվ ահա 2013թ. դեկտեմբերի 3-ին նա նոր ու չլաված քայլ է կատարում: Ահա նրա խոսքը. «Մեծ մեծ խոսելով չի, որ երեխաներին ինտեզրենք հասարակության մեջ: Կապանի N3 հատուկ կրթահամալիրում սովորում են այն երեխաները, որ ապրե... որ ավարտել են այստեղ: Կապանի 3-րդ հատուկ կրթահամալիրի հանրակարգարանում ապրում են այն երեխաները, որոնք տեղ գնալու հնարավորություն չունեն: Այսօր մեկ բնականարան ենք գտել, գնել որբ, ծնողազուրկ երեխաների համար: Յուրաքանչյուր էլի գնում ենք էլի մեծարգո մարզպետի հովանավորությամբ: Միշտ անել... արել ենք մենք՝ մեր ուժերով, բայց եւ անգամ մեծարգո մարզպետ Վահե Մաքսիմիչը որոշեց, որ մեզ պետք է հատկացնի գումար: Երբ որ ասեք ինչքան

գումար, ես այն գումարի մասին խոսեցի, ինքը ասեց, ոչ էսքան գումար պետք է տաք: Եղ գումարը մեզ բավարարեց, որ մենք երեխաներին շատ շատերի համար գտ... գնել ենք այն ինչ որ իրան անհրաժեշտ է եւ կարողացանք եւ միջոցառումը կազմակերպել: Իհարկե, վերանորոգումը բանը, դա էլի կապված է Չանգեզուրի պղնձամուլիբդենային հետ, էլի Հակոբյան ընտանիքների հետ... ընտանիքի հետ... չգիտեմ մեր Աստվածն են, մեր սիրելիներն են: Ոչ թե միայն նա, որ անում են, այլ միայն նա, որ իրանք հոգսը հասկանում են որն է թո հոգսը եւ ձեռք են մեկնում...»:

Ոչինչ, որ հայոց կրթարաններից մեկի տնօրենը մեր մայրենիին տիրապետում է գրո մակարդակով: Խնդիրն այլ է՝ Սյունիքի այլևս ոչ նոր մարզպետը գնահատական չի տվել կատարվածին: Ընդհակառակը, չի բացառվում, որ մեզանում նոր հավատալիքներ տարածող անձնավորությունը (մանավանդ «Սյունյաց երկրի» սույն հրապարակումից հետո) կարծանանա ֆինանսական խրախուսանքի:

Դա էլ, ըստ էության, կարելու չէ: Կարելուը, կարծում ենք, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության վերաբերմունքն է, որին սպասում ենք: Իսկապես, որքանով է ողջամիտ ճակատագրի կամոք դժբախտացած երեխաների միջավայրում մի քանի մանեթի դիմաց օրվա իշխանավորներից մեկի առավել քան սովորական գերդաստանն աստված հռչակելը: Ի վերջո, որքանով է ողջամիտ ֆիզիկական արատ



ունեցող երեխաների կրթության եւ դաստիարակության պատասխանատու գործը նման աշխարհայեցողությամբ անձնավորությանը վստահելը:

Ռիտա Դավթյանի արտառոց հայտարարությունից հետո բազմաթիվ ընթերցողներ են մեզ դիմել ու ամենավերջին հայիտյանքներն ուղղել եւ մի քանի մանեթանոց աստծուն, եւ նորահռչակ աստծո արարողին հատկապես: Իհարկե, պատշաճ չենք համարում այդ հայտարարությունը ներկայացնել ընթերցողին, սակայն ողջունելի է, որ մարդիկ իրենց մերժողական վերաբերմունքն արտահայտեցին կատարվածի հան-

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
15 հունվարի 2014թ.**

Երկիրը վերակառուցելու այլ ճանապարհ չկա

Վաճառարություն

Հացից հետո ժողովրդի համար ամենակարևորը դարձրել է (ժ.Դանտոն) այս բնաբանը Հայաստանում վաղուց է կորցրել իր արդիականությունը: Հասարակության զգալի մասը քանակապես է վերաբերում դպրոցին, ուսուցմանը, ուսուցչի մասնագիտությանը: Ինչու է այդպես:

Մանկավարժությունը դարձել է ամենաարհամարհված, երկրորդական մի մասնագիտություն: Տարիներ առաջ դպրոցի շրջանավարտը եթե չէր կարողանում առավել հարգի, հասարակության կողմից ընդունվող մասնագիտություն ընտրել՝ ընդունվում էր պրոֆեսիոնալներին, որն էլ արհեստ սովորում: Այսօր այդ ուսումնարաններին փոխարինել են մանկավարժական համալսարանները:

«Ուսուցիչ», «մանկավարժ» բառերը խեղճության զգացում են առաջացնում լսողների մեջ, դրանք դարձել են վատ ապրելու, աղքատության հոմանիշներ:

Այսօր մեր երկրի, համայն հայության առաջ կանգնած ամենահարատալ խնդիրներից առաջինը հայրենիքի անվտանգության ապահովումն է, իսկ երկրորդը՝ դպրոցական կրթության արժանապատիվ բարելավումը: Այս երկու կարևորագույն հարցերը ֆունկցիոնալ կապի մեջ են: Առանց անհրաժեշտ գիտելիքների անհնար է տիրապետել ժամանակակից գիտելիքային մասնագիտություններին: Իսկ դպրոցի այսօրվա շրջանավարտների մեծ մասը գիտելիքների պաշարով շատ-շատ հեռու է բանակի պահանջները բավարարելուց: Հարյուրավոր, հազարավոր տղաներ բանակից իրենց ծնողներին, սիրած աղջկան երկու տոկոսը համար դիմում են ընկերների օգնությամբ: Ավելին, առաջին դասարանից երկրորդ դասարան փոխադրվող երեխաների մեջ կան այնպիսիները, ովքեր այդպես էլ բոլոր տարեքանակները չեն կարողանում կատարել: Այդ մասին իմ խոսքի վերջում կասեմ ո՞վ է մեղավոր եմքավերնագրով:

Կրթության ոլորտի պատասխանատուները հաճախ են հպարտությամբ օրինակներ բերում միջազգային ասպարեզներում մեր դպրոցականների շահած մեդալների, նվաճած մրցանակների մասին, շեշտում, որ դրանք թիվը մի քանի անգամ գերազանցում է հարեան երկրի ցուցանիշները: Մենք կիսուն ենք նրանց ուրախությունը, բայց եւ շեշտում, որ դա ամենաինչ էլ դպրոցի շնորհիվ չէ, այլ մեր ազգի աստվածատուր շնորհի՜ ավելացրած մեծ երեխաների հետևողական ծնողների ու առանձին նվիրյալ ուսուցիչների աշխատանքը:

Դպրոցի մասին ցանկացած մակարդակով գրույցն ի վերջո վեր է ածվում բանավեճի: Ու այդ բանավեճի ժամանակ հաճախ ենք լսում, որ դպրոցը դարձել է փորձադաշտ: Ամացած քսան տարվա ընթացքում դպրոցում քանի-քանի էքսպերիմենտ դրվեց (հաճախ անհաջող), ուսուցիչ-

ներին, աշակերտներին, քանի-քանի խոստումներ տրվեցին ու մոռացան դրանց կատարման մասին: Այդ, դպրոցներից շատերը վերանորոգվեցին, տեխնիկապես վերազինվեցին, ուսուցման բազմաթիվ նոր մեթոդներ ներդրվեցին, բայց ավագ, ոչինչ չարվեց ուսուցման կենտրոնական դեմքի՝ ուսուցչի մասնագիտական ու կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ:

Հավանաբար բնագավառը դեկավարող այրերը դա երկրորդական հարց են համարում, այլապես չէր լի մի այնպես, ինչպես կա:

Ասում են ուսուցիչ ծնվում են, ուսուցիչ չեն դառնում: Վիճարկելի հարցադրում է: Դպրոցի ֆիզիկայի իմ ուսուցիչը, ով այս բնագավառի՝ հանրապետությունում ծանաչված դեմք է, պատմում է, որ ուսուցիչ է դարձել իր ուսուցիչների մեծ կոստյում եւ փայլուն, սեւ կոշիկներ հագնելու համար: Այո՞, պատերազմից հետո դպրոցը, ուսուցիչը գտնվում էին խորհրդային պետության, հասարակության ուշադրության կենտրոնում: Սկսած անցած դարի 60-ական թվականներից ուսուցչի աշխատավարձն անընդհատ բարձրացնում էին, իսկ 70-ականներին համարվում էր ամենաբարձրից մեկը երկրում: Ուսուցիչը կարողանում էր իր խնայողություններով ավտոմեքենա գնել, մեկնել հանգստանալու: Ուսուցչին տրվում էին այլ արտոնություններ եւս, գյուղական վայրերում աշխատող տղաներն ազատվում էին բանակում ծառայելուց, կիսով չափ կրճատվում էին կոմունալ ծախսերը: Մի խոսքով՝ ուսուցիչը գտնվում էր համընդհանուր ուշադրության կենտրոնում այս բառի բոլոր իմաստներով:

Իսկ թե ինչպիսին է մեր օրերի ուսուցչի հասարակական դիրքը, բոլորն են տեսնում: Տարիներ առաջ ուսուցչի աշխատավարձը «բարձրացվեց» եւ մինչեւ այժմ շեփոհարավում է: Բարձրացում բառը չափերտների մեջ են առել, որովհետեւ դա մասամբ է համապատասխանում իրականությանը: Իսկ իրական մասն է, որ ուսուցչի դրույքաչափը 18-ից բարձրացվեց 22-ի (այս մասին միշտ լռել են) ու մի քիչ էլ հավելավճար ավելացվեց եւ ի լուր աշխարհի՜ հայտարարվեց՝ շարքային ուսուցչի միջին աշխատավարձը գերազանցում է 100 հազարը: Մի փոքր թվաբանությանը զբաղվեց: Սյունիքի մարզի դպրոցներում աշխատում են հարյուրավոր ուսուցիչներ, որոնցից շատերը շարքային ուսուցիչներ են: Մեծ մասի աշխատավարձը չի գերազանցում 50 հազար դրամը: Դե ինքներդ դատեք ուսուցչի աշխատավարձը բարձրացվել է, թե՛ ոչ:

Վերջերս կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, անդրադառնալով նոր ուսումնական տարվա հետ առնչվող հարցերին, դարձյալ բարձրաձայնեց ուսուցչի աշխատավարձի կտրուկ բարձրացման մասին՝ չմոռանալով շեշտել, որ հանրապետությունում միայն ուսուցչի աշխատավարձն է ինտենսիվորեն աճել եւ հասել 168 հազար դրամի՝ չհաշված սպասվելիք 9%-ի բարձրա-



Գրողը:

Եթե կրկնությունը կրկնություն է, ապա հարկավոր են համարում կրկնել: «Պարոն նախարար, խնդրում եմ մի ձեռքի մատների վրա հաշվել Սյունիքի մարզի շարքային այն ուսուցիչների անունները, ովքեր ստանում են այդքան աշխատավարձ: Չեք կարող: Այդպիսիք չկան: Չեզ սխալ ինֆորմացիա են տվել»:

Երկրորդ ուշադրավ հարցն ազգային պարի ուսուցումն ուսումնական ծրագրում ընդգրկելն է: Գաղափարն ինքնին գեղեցիկ է, բայց հավանաբար միայն այդքանը: Հանդգրված են, որ սա էլ է «մենք ուրիշ ենք» շարքից, եթե ոչ, ապա ասացեք խնդրեմ՝ ի՞նչ ռեսուրսներով: Մի գիշերվա մեջ պարի ուսուցիչներ են պատրաստելու հանրապետության բոլոր դպրոցների համար, թե՛ դասավանդող ուսուցչի գեղագիտական բարձր մակարդակն է ապահովելու դրա իրականացումը: Ով ով, բայց մենք՝ ուսուցիչներս, լավ գիտենք մեր էսթետիկական, գեղագիտական մակարդակի մասին: Հարկավոր է միայն վիզ առնել եւ բարձրաձայնել այդ մասին, որ իմանան նաեւ մեր ղեկավարները, իմանան, որ դասավանդող ուսուցիչների զգալի մասը կյանքում գոնե մեկ անգամ է կրամի վրա կինոնկար չի դիտել: Իսկ բատրոնի, օպերայի մասին էլ չեն խոսում: Դրանց տեղը միայն հավաքեալ ուսուցիչ գիտի:

Եվ այսպես՝ ո՞վ է մեղավոր: Մեղավոր կարող են շատերը լինել, բայց ամենից առաջին մեղավորն ուսուցիչն է: Իսկ ո՞վ է այսօր ուսուցիչ դառնում. դպրոցը միջակ գնահատականներով մի կերպ ավարտած շրջանավարտը: Կա՞, արդյոք, մի խթան, որ ստիպի դպրոցի լավագույն շրջանավարտին տասնյակ մասնագիտությունների շարքում ընտրել ուսուցչի մասնագիտությունը: Ընտրի որ ի՞նչ անի, դժվարությամբ աշխատա՞նք ճարի, ամսական 50-60 հազար դրամ աշխատավարձ ստանա՞, շրջապատում իր նկատմամբ խղճահարույ՞թյուն առաջացնի, ընտրի ու կրակն ընկնի՞:

Տողերիս հեղինակը 1970-ին ավարտել է Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կենսաբանաքիմիական ֆակուլտետի քիմիայի բաժինը: Այդ բաժնի առաջին շրջանավարտներից են: Այսբան ճշգրիտ հասցե են տալիս, որ հետո ավելացնեմ՝ իմ 23 համա-

կուրսեցուց 11-ը դպրոցի ոսկե կամ արծաթե մեդալակիր էր: Միայն մի կուրսում: Իսկ այսօր հանրապետության բազմաթիվ մանկավարժական համալսարաններում կա՞ դպրոցը գերազանց ավարտած թեկուզ հինգ ուսանող: Բա էլ ինչպե՞ս խոսենք բարձրորակ մանկավարժների մասին:

Մեղավակիրը մանկավարժական համալսարան էր գնում, որովհետեւ տեսնում էր, որ մանկավարժը հասարակության լիարժեք անդամն է, ընդունվում է նրա կողմից եւ կարող է իր աշխատավարձով մարդավարի ապրել, ընտանիք պահել, տուն կառուցել, երեխաներ մեծացնել...

Մտերիմների շրջապատում ուսուցիչների կենսականի մասին խոսք գնալիս մի օրինակ հաճախ են բերում: Այսօր համարձակվում են այս գրույցին հրավիրել մեր նախարար պ. Արմեն Աշոտյանին եւ մորանշանակ վարչապետ պ. Հր. վիկ Աբրահամյանին ու նրանց հետ քննարկել ցանկացած մարդու համար ամենակենսական հարցերից մեկը: Խոսքը ուսուցչի բնակարանային հարցի մասին է: Նախկինում գյուղական բնակավայրերում կառուցվում էին այսպես կոչված ուսուցչի տներ ու դրանով լուծում մանկավարժների շատերի բնակարանային հարցը: Դա անցավ-գնաց:

Ավանդաբար հանրապետությունում մանկավարժ ընտանիքները (ամուսիններով մանկավարժներ) շատ են: Երիտասարդ ընտանիքների բնակարանային հարցի լուծման երկու ճանապարհ է մնում: Առաջինը սեփական ուժերով դրա կառուցումն է: Եթե ամուսիններից յուրաքանչյուրի աշխատավարձը նույնիսկ հասնի խոստացած 100 հազարի դրամի, ապա սննդի ու կոմունալ ծառայությունների վրա կատարվող ծախսերը հոգալուց հետո, ինչպես ասում են, ամանի մեջ էլ բան չի մնա:

Երկրորդ՝ հիփոթեքային վարկն է: Բայց բանից պարզվում է, որ դա էլ սովորական մահկանացուների համար չէ, այլ նրանց, ում ամսական միջին եկամուտը մեկ շնչի հաշվով գերազանցում է 250.000 (՝) դրամը: Այ, այսպես:

Ասում են՝ հույսը վերջում է մահանում: Հայտնի բան է՝ մահանալ կարող է մի բան, որ գոյություն ունի, իսկ եթե գոյություն չունի՞:

Այս ամենի ֆոնի վրա ուղղակի գայրույթ է առաջացնում, երբ մայրաքաղաքի մեկ-երկու դպրոցում նկատված կաշառակերության երեւույթներն ընդհանրացվում, տարածում են ամբողջ համակարգի վրա՝ աչքի տակ ունենալով առաջին եւ վերջին զանգի ուսուցչին երկու ծաղիկ նվիրելու փաստը: Սա հունոր չէ, սարկազմ է: Ավանայից հիշում ես միամիտ գյուղացուն, որ խոստինձի դաշտում առավոտյան կորցրած բանակները երեկոյան փնտրում է լուսավոր գյուղամիջում:

Չեն ցանկանում մարգարե երեւալ, ուղղակի իմ համոզմունքն են բարձրաձայն արտահայտում: Մեր երկրի իրական կայացումը, տնտեսական, հոգեւոր վերելքը կսկսի այն ժամանակ, երբ ուսուցչի աշխատանքը նյութապես դառնա այնքան հրապուրիչ, որ դպրոցի լավագույն շրջանավարտը մասնագիտություն փնտրելիս ընտրի մանկավարժական բուհը եւ ավարտելուց հետո վերադառնա դպրոց: Երկիրը վերակառուցելու այլ ճանապարհ չկա:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գորիս

Մեղրու փարածաշրջանին՝ նոր էկոլոգիական վրանագ

ՍԿԻՋԸ ԷՏ 11

մինչեւ նախագծի փորձաքննություն անցնելը եւ դա այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը արդեն իսկ արտոնություններ էր տվել «Ատ Մետալս» ՍՊԸ-ին՝ ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով ներմուծվող եւ 300 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգելով մինչեւ 2016թ.:

Հանքավայրը շահագործվելու է ամենօրյա պայթեցումների միջոցով: Ըստ նախագծի՝ Տաշտուն եւ Լիճք գյուղերի բնակիչների վրա արտաքին միջավայրի անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը հանքավայրի շահագործման ժամանակ առաջացած աղմուկն է: «Կուտակվելով մարդու օրգանիզմում՝ ակուստիկ զրգռումն առաջին հերթին վնասակար ազդեցություն է գործում կենտրոնական նյարդային համակարգի վրա: Աղմուկային ծանրաբեռնվածությունը բացառաբար է անդրադառնում հատկապես մանկական օրգանիզմի վրա», - նշված է նախագծում: Բացի աղմուկից բնակչության առողջությանը մեծ վնաս կհասցնի նաեւ տրոսիկ նյութերով եւ վնասակար զազերով հագեցած հանքավայրի փոշին, ինչպես նաեւ ռադիոակտիվ ֆոնի բարձրացումը, ինչի մասին նախագծում ոչինչ ասված չէ: «Շրջակա միջավայրի վրա տարբեր հանքավայրերի քիմիական ազդեցության աղյուսակի» համաձայն՝ եթե հանքավայրում առկա է եւ ոսկի, եւ արծաթ, ապա այդ հանքավայրում առկա է ռադիոակտիվ ֆոն:

7 օգոստոսի 2014թ.
Էկոլոգ

Սեպտեմբերի 23-24-ին կմեկնարկի Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի 80-րդ թափառաշրջանը

Այդ կապակցությամբ կբեմադրվեն «Եվգինե» դրաման (բեմադրող ռեժիսոր Աննա Ավետիսյան) եւ «Ամերիկյան խառնաշփոթ» կատակերգությունը (բեմադրող ռեժիսոր Քաջայր Հակոբյան): Հանդիսատեսին սկզբնապես կդառնա հոգեբանական լարված իրավիճակների, հետաքրքիր հանգուցալուծումների ու դերասանական բարձրակարգ խաղի: Հատկաշարի մեջ է փաստը, որ թատրոնի դերասանական կազմը համալրվել է երիտասարդ կարգերով, ովքեր մի նոր եջ կբացեն թատրոնի պատմության մեջ:

ՇՆՈՐՀԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ
Նույն Պողոսյանը շնորհակալություն է հայտնում Գորիսի բժշկական կենտրոնի վիրաբույժ Վարդիմիր Վաղարշապի Հայրապետյանին՝ Սիսիան-Գորիս ավտոճանապարհին տեղի ունեցած վթարից հետո իրեն համապատասխան բուժօգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ ապաքինման ամբողջ ժամանակահատվածում ունեցած հոգատար վերաբերմունքի համար:

ԿՈՐԵԼ Է Էդուարդ Ռուբենի Բաղդասարյանի (ծնված 30.12.1951թ., Ար. ՍՍՀ Բաբուր քաղաքում) ծննդյան վկայականը: Գտնողին խնդրում ենք զանգահարել 077053568 հեռախոսահամարով:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթը խորապես վշտացած է բանաստեղծ Ռոմիկ Սարգսյանի անժամանակ մահվան առիթով, ցավակցում է Սարգսյանների ընտանիքին եւ հանգուցյալի բոլոր հարազատներին ու մտերիմներին:

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՒԵԼ ԱԼԵՔՍԱՆԻ
ԳԻՄՆԱԿՐԻԿ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱԿԻԿ «ՍՅՈՒՆԵՅԱՑ ԱՇՆԱԿՐ» ՍՊԸ

Հասցե՝ Գեղարտստ՝ Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԳ - ՏՍՆՈՒՑՈՒՄ» բաժնույն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիրին» պարտադիր է:

© Ելանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Կղզակույնյաց 2:
Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.09.2014թ.: